

# ԳԱՐՈՒ

ԱՄՍԱԳԻՐ

ԵԶԳԵՅԻ ՀՈՒՍԵՈՐԴԹԵԸ ԵԿ

ԴԱՏԵՄՇԱԿՈՒԹԵԸ

1866

ԵՓԵՔԻ ՏԵՐ

Եմատեալ 2.

Պայծառ արփին արդ բարձրացաւ  
Հալման սառին ժամէ արդէն.  
Կարմիր վարդին ոստ կակղացաւ,  
Ծաղկման ծառին ժամէ արդէն:  
Պետրոս վարդապետ Ղափանցի:

S F Խ Ե Ս

1866

# ՅԱԿԱՐ

## ԲՈՎԵԴԱԿԱՄՊԹԻՒՆ

Համառօս Տեսութիւն Եկեղեցական Պատմութեան . Ամանդինեանց	64— 74
Արիտիքական քննութիւն Եկեղեցւոյ գլուխութեան վերայ . Ամանդինեանց	75— 85
Տերունական Եղօթքի Աեկինութիւն . Ե. Տէր Յակոբեանց . . . . .	86— 93
Ստորագրութիւն Թիֆլիսու. Ե. Տ. Յակոբեանց .	94—103
Հրաժեշտ Ծրագիլ . Ի. Բ. . . . .	104—
Հոգկաստանի ծովային ճանապարհի դիւտը .	105—120
Վ. Շահվերդեանց . . . . .	121—123
Նամակ Թիֆլիսեց . Ե. Ամանդակունի . . . . .	124—128
Արիտիկա	

Հայոց ազգական պատմութեան  
առաջնահանձնական մասնակիութեան  
առաջնահանձնական մասնակիութեան  
առաջնահանձնական մասնակիութեան  
առաջնահանձնական մասնակիութեան  
առաջնահանձնական մասնակիութեան

# ԳԱՐԱԿԱՆ

## ԸՄՍՎՔԵՐ

Ազգային Լուսաւորութեան և Դասահարակութեան:

---

Ա. տարի - ամսատեար Բ. Փետրվար - 1866.

---

## ՀԵՄԱՅՈՍ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՅՈՒՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ :

Առաքելոց վաստակն և նոցա համառօտ կեանքն :

Առաքեալքն երբ որ առաջին Եկեղեցին հաստատեցին Երուասիկի մէջ, որի առաջին եպիսկոպոսն եղաւ Յակարոս ՏԵՍՈՒՆ ԵՂԵՑՅՈՒՆ, և այն շինելով ընդհանուր եկեղեցեաց միութեան կեդրան, ապա ցրւեցան ամենայն աշխարհի մէջ քարոզելու Աւետարաննը :

ՊԵՏՐՈՍ էր ձինորս, առաջ կոչւումէր Արման, Տնըն գեան տեղն է Գալիլեացւոց Տեթսայիդաց քաղաքը, Կեփթաղիմի ցեղեց որդի Յոնանի, և Անդրէասի փոքր եղբայրն էր Եպիփանի ասելով. իսկ Ոսկերերանի ասելով էր մեծը .— նախ իւր Անդրէաս եղբայրն ներկայացրեց զնա Յիսուսին, որին Յիսուս անուն դրաւ Ասորւոց լեզւով Կեփաս, որ յունարէն կթարդմանսի Պետրոս, այսինքն է, Վէճմ (Յովչ. ա. 40—42): Յետոյ Յիսուս ինքն կանչեց ձինորսութենից

գէալ ի առաքելութիւն մարդիք որսալու գէալ ի Աեանքը (Մատ. գ. 18, 19: Պուկ. ե. 10, 11): Փրկիչն գովեց զնա աշակերտների առջեւ, որովհետեւ շատ ջերմեռանդ էր գէալ ի Յիսուս, Պետրոս ոչինչ գերազանցութիւն չստացաւ միւսների վերայ. որ առաջնութեան համար կուռում էին (Մարկ. թ. 33, 34): Իսյց շատ բանի մէջ ունէր դասաւորութեան հաշումը առաջնութիւն, ինչպէս սովորութիւն է աշակերտներու մէջ: «Սա Յիսուսի չարչարանքից առաջ պարծեցաւ թէ պատրաստ է մեռնել նորա հետ, բայց Յիսուս գուշակեց՝ որ նա երեք անդամ կուրանայ զինքն (Պուկ. լք. 33, 34), և կատարեցաւ, և դառն լայլելով ջնջեց իւր ուրացութեան մեղքը: Պետրոս տեսաւ Քրիստոսի Կատուածութեան փառքը Յակոբոսի և Յովհաննէսի հետ Թարօր լեռան վերայ (Մատ. ժէ. 1, 2: Մարկ. թ. 1: Պուկ. թ. 28): Սա առաջ զնաց Քրիստոսի գերեզմանը յարութիւնից յետոյ, և արժանացաւ մէնակ տեսնել յարուցեալ Փրկչին (Պուկ. իդ. 34), և կրկին հաստատեցաւ առաքելական աստիճանի մէջ (Յովհ. իս. 15—18): Սուրբ Հոգույն իջաննելուն պէս՝ Պետրոս առաջինը ձգեց Երուսաղէմայ եկեղեցւոյ հիմքը, դարձնելով երկու քարոզութեամբ ութն հազար հոգի (Տես եր. 14, 15): Սա՞ արդեօք եղաւ Կնտիռքայ եպիսկոպոս ինչպէս ասում էն պատականներն .—սուրբ Գրքից ոչինչ յայտնի չէ, որվհետեւ Պուկաս չէ գրում, այլ Կնտիռքում լինիլը ստոյգ է, պատճառ որ Պաւղոս այն տեղ յանդիմաննեց զնա հրապարակաւ, որ հեթանոսներու հետ չէր հաղորդակցութիւն անում. (Գաղ. թ. 11): Իսյց նորա Հուում լինիլը կամկածանքի ներքոյ է. թէպէտ Եւսիրիոս զրումէ թէ, «առանց գութիւնէ» թէ Պետրոս Հուումը իսաչեցաւ,, (Եւս. զիրք թ. գլ. 27), և թէ «իւր կեանքի վերջին օրերումն է եկել Հուում, (Եւս. զիրք գ. զլ. 1): Իսկ կարծիքը նորա քսանու հինգ տարի եպիսկոպոսութիւն անելու վերայ Հուումի մէջ, որ միայն Եւսերիոսի քրոսնիկոնի վերայ են հիմնում մի քա-



տաքէոսին, որ եօթանասուն աշակերտներից մէկն էր ձեռնաշղթեց այն տեղի վերայ եպիսկոպոս։ Իսկ նորա նահատակութեան տարին չէ յայտնի։

**ՅԵԿԱԲՈՍ** ։ Օեբեթեայ։ Սորա մայր Սողոմէն էր Յօստուածածնայ մօր քրոջ աղջիկը, սրան իւր եղայր Յովհաննէսի հետ կանչեց Յիսուս ձկնորսութենից դէպ ի առաքելական պատիւ, և անւանեց զնոսա Բաներ եգէս, որ թարգմանի որոտութն (Մարկ. գ. 17)։ Սոցա մայրն իր ըստ աղջական Յիսուսի համարձակ խնդրեց Տիրոջը նստեցնել զնոսա արքայութեան մէջ իւր աջ ու ձախ (Մատ. ի. 20, 21)։ Սա արժանայաւ տեսնելու Քրիստոսի Յօստուածութիւնը Թաքրօր լեռան դլիսն։

Յակոբոս քարոզեց Սպանիացոց, և հաստատեց այն տեղ Նկեղեցի, յետոյ զարձաւ Երուսաղէմ, ուր շարունակեց իւր քարոզութիւնը, և Հրէայք մասնեցին Հերովդէս Եզրիպատին, և սա կտրել տուաւ նորա զլուխը 44 թւին, որի մարմինը մէկ Սպանիացի հաւատացեալ կին տարաւ Սպանիա։ Բայց ինչպէս Սպանիա գնալը, նոյնպէս և մարմնու տանելը այն տեղ, է կարծիքական, պատճառ որ Պուկաս չէ զրում ոչին։

**ՅՈՎՀԵՆԻԿՈ** ։ Եւետարանիչ Յակոբոսի փոքր եղբայրն էր Քրիստոսի սիրելի աշակերտը. և առաքելոց մէջ պստիկն։ Սա մատնութեան գիշերին՝ որ Յիսուս ասաց թէ «Մէկը ձեզմէն պիտի զիս մասնէ այս գիշեր», փաթըթւեցաւ Յիսուսի շլոնքով և հարցրեց թէ «ո՞վ է մատնիչը», (Յովհ. ժդ. 23)։ Օքա տւաւ Յօստուածածնին իւր փոխանակ որդի (Յովհ. ժթ. 26, 27), և մինչեւ Յօստուածածոր մահը չէերացաւ նրամէն, այլ Երուսաղէմումն էր քարոզում։ Յետոյ դնաց Եփեսոս, ուր բազմացրեց հաւատացելոց թիւը քարոզութենով և հրաշքներով. և Դոմետիանոս կայսեր հալածանքի ժամանակ ձգեցին եռացած ձիթի մէջ, բայց անվասն դուրս եկաւ, և կայսրն աքսորեց զնա Պատ-



մէն երկուսը նրա հետ մեռան և երկուսը ամուսնացան։ Արշանցը չպէտք է խառնել Փիլիպպոս սարկաւագի չորս դուռապրների հետ։

ԹՌՎՄԿՍ տնւանեալն երկուսին եղաւ ակակի ։ Էր եղբայր Հայոց առաքեալ Թաղէսոփ, ազդով Խարացէլացի։ Աս, որ Քրիստոս գնում էր Տեղանիա Պատարոսին յարութիւն տալու, ասաց, «օն եկէք, և մենք էլ նրա հետ մեռնինք», որովհետեւ աշակերտները վախենում էին գնալ Հրէից ահից (Յով. ժա. 7-16)։ Աս զրեց Եբդարի թղթի պատասխանը Քրիստոսի հրամանով (Խոր. զիրք բ. զԼ. լբ.), և խորհրդական ընթրիքից յետոյ հարցրեց Քրիստոսին թէ «Տէր, չե՞ք զիտում, ո՞ւր ես գնում, և ի՞նչպէս կարողանանք ճանապարհը գիտենալ», . որով արժանացաւ զեղեցիկ պատասխանուն, թէ «Ես եմ ճանապարհ, և Ճմարտութիւն և կեանք . ոչ ոք չեղայ իմ Հօր մօտ, եթէ ոչ Խնձով», (Յով. ժդ. 5. 6)։ Աս Քրիստոսին յարութեան ժամանակը չտեսաւ, այլ ութերորդ օրը, որ և ասաւ «Եթէ չտեսնեմ նորա ձեռների վերայ բեեաների նշանները, և մատներս չզցեմ միսերի տեղը, ու ձեռքս չկոխեմ նորա կողքումը, չեմ հաւատայ»։ Յիսուս թոյլ տւաւ նրան այնպէս անել (Յով. ի. 24-29)։ Թյովմաս թէպէտ այս բանի համար կոչեցաւ թերահաւատ, բայց ամենքի վերայ աւելի ժրացաւ, և շատ հեռաւոր աշխարհներում սկսաւ քարոզել, որովհետեւ սրան վիճակւելով Հնդկաստանը՝ սկսեց իւր ճանապարհորդութիւնը արեելեան կողմը, վասն որոյ զանազան մատենագիրներ ասում են, թէ քարոզեց Պարթևներուն, Քրիտերուն, Վրկանայ (Վասպից ծովի կողմը) աշխարհումը, Բակտրիացւոց, և երեք մոգերուն, որ Քրիստոսին տեսնելու եկան՝ մկրտեց, և անցկացաւ Հնդկաստան և Չինաստան հաստատելով Եկեղեցիք և քահանայք, և նահատակեցաւ Հնդկաց Մժդեհ թաղաւորի օրով Արամենա քաղաքումը, որ և Մաղապուր է ասում, «Արսինգայ գաւառումը, մի քանի մղոնով հեռու Մատրասից,

որի մարմինը նորա աշակերտ Քսանթիկոսը բերաւ Հայոց Մեջագետք, և ամփոփեց Եղեսիա քաղաքումը:

**ԹԱՌԵԽՈՍ.** առ եղաւ հեթանոսների առաջին առաքեալ, քարոզելով Հայոց աշխարհում հաստատեց Եկեղեցիք և նահատակւեցաւ մեր Սանատուկ թագաւորից Աղքակ քաղաքումը (ընդարձակը տես Հայոց եկեղեցւոյ պատմութեան մէջ):

**ԻՆՔԴԻԱՏԱՋՄԵԽՈՍ.** գնաց Թճովմասի հետ մինչեւ Հնդկաստան, տանելով և Մատթէոսի աւետարանը, և յետ գառնալով Երուսաղէմ և այն տեղեց Հայաստան՝ շատերուն մկրտեց և նահատակւեցաւ Սանատուկ թագաւորից: (Ընդգարձակը տես Հայոց եկեղեցւոյ պատմութեան մէջ):

**ՄԱՏԹԵԽՈՍ.** առաջ կոչումէր Պէփ, էր որդի Աւ փեայ և Յուգայի ցեղից, ինքն մաքսաւոր, որ էր գործ վատանուն, և պակաս չէր մեղաւորից: Երբոր Կափառնայում քաղաքի Տիբերական ծովի ափը նստած էր մաքսատան մէջ՝ Յիսուս անցկենալով տեսաւ զնու և ասաւ Անկ զիսի իմ, և նա շուտով լսեց Փրկչի ձայնը, ու գնաց աշակերտեցաւ Ալբան, և Յիսուսին հրաւիրեց իւր տուն աշակերտաներով, ուր հրաւիրած էին և շատ մաքսաւորներ, որով յայտնեց ամենաքին իւր պատի ուրախութիւնը թողնելով կորսատական մեծութիւնը և հետեւելով Յիսուսին (Մատ. թ. 9: Մարկ. թ. 14: Պուկ. ե. 27): Սա նախ քարոզումէ Երուսաղէմումը, և երբ կամենում էր գնալ հեռու երկիրներ Էլ քարոզելու՝ գրեց Աւետարանը Երուսաղէմացւոց խնդրանկով, և ինքն գնաց բարբարաներու աշխարքը, և յետոյ եկաւ Ասորւց Աւպամիս քաղաքը ուր և նահատակւեցաւ, որի մասունքը բերելով Ասափոք քաղաքը՝ հաստատեցաւ այն տեղ պատրիարքութեան առաջին աթոռը: Սորս համար աւանդութեամբ ասում են, թէ գնաց Եթովպիայ յաղթեց երկու կախարդներին, ովք առաջնորդ ունէին իրանց երկու վիշապ, և յարութիւն տւաւ նոցա թագաւոր Եղիպաղոսի աղջկան մեռելու-

թենից և այս պատճառով հաւատացին թափաւորն և ժողովուրդն :

**ՅՈՒԴԵՅ ԹԵՇԵԱՍ կամ ԴԵԲԵՋԱՍ :** Սա էր Սատածահայր Յովսէփի եղբայր Ազեռվասի որդին, և կոչումէ եղբայր Տեառն . ասւումէ և Յուգայ Յակոբեան իւր մեծ եղբօր անունով ինչպէս ինքն էլ Կաթուղիկեաց թղթումը պարծանքով զրումէ “Յուգա Յիսուսի Քրիստոսի ծառայ, և եղբայր Յակոբայ,, : Սա քարոզեց Սորուոց, Հայոց, Քուրդերու և Պարսից աշխարքներումը, շատերուն դարձրեց ու մլրտեց : Երբ որ սուրբն Յուգա շրջումէր մեծ Հայաստանում պատահեցաւ Բարթուղիմէոս առաքեալին Աղբակայ կողմը Արտաշատու բլրի վերա, ուր այն գիշեր մընացին և առաւտօտուն մէկ քարի վերա Խաչ զրոշմեցին, ու օծեցին, և կոչեցաւ Օթեաց Խաչ : Յետոյ գնաց Սորուոց և Պարսից կողմը և Սիմոն Պետրոսի զործակցութեամբ քարոզեց, ապա յետ դառաւ Հայաստանի Հերայ և Օարեանդայ (Սալմաստի և Մարաղի) նահանգը և նահանակւեցաւ Որմի քաղաքումը (69 թւին) :

**ՄԻՄՈՒ ԿԵՆԵՆԵՑԻ, կամ ՇՄԵԼԻՆ ՆԵԽԵՆՉՎԵՅԱՅ.Օ.** էր Գալելիացւոց Կանա քաղաքից, իսկ թէ ուր քարոզեց և ուր կատարեցաւ՝ զմնազան են կարծիքներն : Յունաց Յայսմաւուրքը (Մայիսի 10) և մեր Ճառընտիրը զրումէն՝ թէ նա քարոզեց Մավրիտանացւոց և Կիրիկեցւոց աշխարքներումը, յետոյ գնաց Ծրիտանիա, ուր Խաչ հանեցին գնա, և այն անդ էլ թաղւեցաւ : Խակոմանք, մանոււտնդ պապականներն, ասումէն՝ թէ Պարսիաստանումը քարոզեց, վկայ բերելով Մովսէս Խորենացու խօսքը, թէ “Սերսէհ Մարեաստանի թագաւորը խնդրելով Արգարից, որ Թաղէսին ուղարկէ. և նա պատասխան է զրում; թէ “Յընկերաց նորա ՚ի զիստանորաց Սիմոն անուն, նա ՚ի կողմանս Պարսից առաքեալ է. ինդիր արարեալ՝ լոիցես նմա,,,: Բայց այս Սիմոնը ինչպէս երեւումէ չէ Կանանացին

այլ Արմեն Պետրոսն է, որին դլիւաւոր է կոչում։ Վարդարի թուղթը հաստատում է և Պետրոս առաքեալը իւր Կաթուղիկեաց թղթի մէջ գրելով այսպէս “Ողջոյն տայ ձեզ, որ ՚ի Տարին ընտրելակից եկեղեցին, և Մարկոս որդի իմն, (ա. Պետր. ե. 13):

**ՅԵԿԱՐԱՍ ԱԼՓԵԾԸ.** կոչեցեալն կրտսեր, համարւումէ Մատթէոս աւետարաննչի եղբայր։ աս Նրէից և հեթանոսներուն քարոզելուց յետոյ նահատակեցաւ Ասորոց երկրումը։

**ՄԵՏՍՅԹԱՒ.** էր եօթանասնիցմէն, Բեղդէհէմքաղաքից, սովորել էր Արմեն օրէնսուոյց վարդապետի մօտ, և յետոյ ընտրեց Յիսուս եօթանասուն տշակերտներու հաշումը։ Աս Քրիստոսի համբարձմանից յետոյ ընտրւեցաւ վեճակով Առաքեալ տաններկու թիւը լրացնելու Յուղայի տեղ, և զնաց քարոզելու Նրէից և հեթանոսներուն, և նահատակւեցաւ Նրէատանում։ Ոմանք նահատակութեան տեղը դընումնեն Եթովպիա, բայց դուցէ նորա անունը շփոթում լինին Մատթէոս աւետարաննչի անւան հետ։

**ՄԵՄԿԱՍ Աւետարանիչ,** աշակերտ և որդեգիր Պետրոսի։ Աս էր Պետրոսի, Պաւղոսի և Բառնարասի զործակից, յետոյ միայն շրջեցաւ աւետարանը քարոզելու Եգիպտացւոց գաւառներում և շատերին զարձրեց դէպ ի Քրիստոս, ապա զնաց նոցա Աղէքասնդրիս մայրաքաղաքը, ուր հաստատեց պատրիարքութեան երկրորդ աթոռը և նահատակեցաւ Աերտնի ժամանակ։ Աս զրեց Պետրոս առաքեալի իննդրանքով Աւետարանը։

**ԴՐԻԿԱՍ Աւետարանիչ** էր Ասորուց Անտիոքայ քաղաքից, արհեստով բժիշկ, զիտէր և նկարչութիւն, և զարձաւ դէպ ի քրիստոնէութիւն Պաւղոսի քարոզութեամբ, և զործակից եղաւ նրան։ շրջեցաւ քարոզելու Մակեդոնիա, Դաղմատիա և մեռաւ խաղաղութեամբ 80 կամ 84 տարեան (իր 90 թվին)։ Աս զրեց նախ Աւետարանը Կապա-

դովիճացւոց Անսարիու Թէռփիլոս եպիսկոպոսի խնդրանքով,  
որ էր իւր քաղաքակից, իսկ Գողթք Առաքելոցը զրեց Հը-  
ռոմքաղաքումը, նոյն եպիսկոպոսին ուղղելով զրքի սկիզբը.  
և Հոռովմումը հաստատեց պատրիարքութեան երրորդ աթո-  
ռը: Աւանդութիւն է մեր մէջ, թէ Հասանվալի եօթն վե-  
րաց Աստուածածնայ պատկերը, որ այժմ գտանուում է Ա-  
Էքսանդրասպուլքաղաքում Հայոց եկեղեցւոյ մէջ, նկարել է  
Դուկաս Աւետարանիչը:

Միւս աշակերտներու՝ այսինքն եօթանասնից և ուրիշ  
հաւատացեալներու վաստակները երկար կլնի զրել, այլ ցան-  
կացողները կարող են գտնել Յայսմաւուրքում, Շառնասիր-  
ներում և սրբոց վարքում, և մեք միայն զլաւորների վաս-  
տակները զրեցինք, և ամենքն էլ Հասարակ առաքեալի  
գործ էին կատարում համաձայն Քրիստոսի պատիրանին,  
թէ «Երթայք յաշխարհ ամենայն և քարոզեցէք զաւետա-  
րանն արքայութեան ամենայն արարածոց», (Մարկ. Ժզ. 15):

## ԿՐՏՏԵՔԱԿԵՆ ՔԵՆՈՒԹՅՈՒՆ

Եկեղեցւոյ Պլաստորութեան վերայ :

Ապօլիկ մատենագիրներն , մանաւանդ հոգեորական-ներն , և նոքա որք մեզմէն դարձած են դէպ ի հռովմէակա-նութիւն երրորդ գարից սկսած հրատարակում են Պապին այեղերական զլուխ , օրէնսդիր և հրամանատու ամենայն Ե-կեղեցեաց , որք կան ընդհանուր աշխարհի երեսին . նա մի-այն փոխանորդ Քրիստոսի , որպէս թէ Քրիստոս իւր ա-մենայն իրաւունքը տւառ սուրբ Պետրոս առաքեալին , նրան կարգեց զլուխ և հրամանատու միւս առաքեալներու վերայ , նրան միայն յանձնեց արքայութեան բանալիքը՝ փակելու և բանալու—արձակելու և կաղելու , և Պետրոս գոլով հիմող Հոռմայ եկեղեցւոյ և նորա 25 տարի եպիսկոպոս՝ այդ ի-րաւունքը յանձնեց իւր յաջորդներին—պապերին : Ը առ լու-են ասում . բայց քննունք նոցա զրւածքի միտքը և համեմա-տենք աւետարանական և առաքելական զրւածքների հետ , և այս կրիստիքական քննութիւնը բաժնուածքներ չորս հատւած , 1) Ո՞վ է հիմնադիր եկեղեցւոյ . 2) Քրիստոսից յետոյ ո՞վ է համարւում եկեղեցւոյ զլուխ և հիմն . 3) Ինչո՞ւ են պապա-կաններն ասում , թէ սուրբն Պետրոս է զլուխ առաքելոց և Հռովմայ եկեղեցին է զլուխ և օրէնսդիր ամենայն եկեղեցեաց . 4) Պետրոս Հռոմ զնացել է թէ ոչ : Այս չորս խնդիրների բացատրութիւնքն կհաստատւին թէպէտ աստուածաբան մա-տենագիրների վերայ , բայց զլաւորապէս Աւետարանի և առաքելական զրւածքների վերայ և նոյն իսկ պապական Հայ մատենագիրներու վերայ :

Աւակայն ոչ ոք չկարծէ թէ մենք այս գրւածքով զինուումենք  
Հռոմայ եկեղեցւոյ դէմ. քաւ լիցի, այլ որովհեաւ Հայ կա-  
թօլիկ վարդապետներն չեն հանգստանում գրել մինչեւ անգամ  
և նորերումն Հ. Հիւրմիկեանցն իւր տպած Աստուածաբա-  
նութեան երկրորդ հատորումը, սուրբ Պետրոսի գլուաւորու-  
թիւնը և նորա յաջորդներու իւրեւ աստուածաբանական խրն-  
դիր տպել է, ուստի հրատարակումենք նրանց դէմ պատաս-  
խանին, մեր ազգին իմաց անելու և զգուշացնելու, որ իրանց  
եկեղեցուն հասատ լինին, և զիտենան թէ Հռոմայ Պապն  
ոչինչ իշխանութիւն չունի այն ամենայն բաների վերայ՝ ինչ  
որ վերեւ գրեցինք, նոյնպէս բացի կաթօլիկական Եկեղեցուց՝  
ուրիշ քրիստոնեայ ազգի Եկեղեցւոյ վերայ ամենեին չունի  
ծղաշափ իրաւունք :

### ՀԱՅԿԱԴՐԱՄ ԵԿԵՂԵՑԻՈՅ

“Եոր ուխտի Եկեղեցւոյ հիմնալիկն է Յիսուս Քրիս-  
տոս, որ հին ուխտի եկեղեցւոյ ստուբական օրէնքնելը կա-  
տարելով գրաւ հիմն “Եոր Եկեղեցւոյ, ինչպէս ասաց Սու-  
քելոց, թէ “Եւ ՚ի վերայ այդք վեմի չենեցից զեկեղեցի իմ,  
այսինքն առաքելոց դաւանութեան վերայ, որք դաւանեցին  
զՔրիստոս Արդի Աստուծոյ. և թէ Վաս և այլ ևս ոչխարք  
են Դմ, որք ո՛չ են յայսմ գաւթէ, և զայն ևս պարտ է Դնձ  
ածել այսր, և ձայնի Դմում լուիցեն և եղեցին մի հօտ և մի  
հովել, (Յով. ժ. 16):

Քրիստոսից յետոյ ո՞վ է համարւում Եկեղեցւոյ  
Գլուխ և հիմն :

Թէպէտ Սուաքեալքն փոխարերական անունով կոչում  
են հիմունք եկեղեցւոյ : ըստ այնմ “Ե ինեալք ՚ի վերայ հի-  
ման առաքելոց և մարդարէից, (Եփես. թ. 20): Բայց ա-  
նունն հիմն նշանակում է նոցա քարոզութիւնը Հրէից և  
հեթանոսաց մէջ, որ հիմն եղեւ քրիստոնէութեան, ոչ թէ.

մէկ նոր հաւասար առարածելով՝ ոյլ գլխիստոս : թէ Աստ-  
ուած և որդի Աստուծոյ է ինչպէս որ ինքն պատիրել էր,  
թէ “Գհացէք աշակերտեցէք զամենայն հեթանոս . . . . ,  
Ուսուցէք նոյս պահէլ զամենայն, զոր ինչ պատիրեցի ձեզ,,  
(Մատ . իը . 19 , 20) : Ասման զի՞ Քրիստոս է միայնակ  
հիմն Եկեղեցւոյ, ինչպէս ասումէ Պաւլոս առաքելով՝ “ըզ  
հիմն՝ զայլ ո՛չ ոք կարէ գնել քան զեղեալն, որէ Յիսուս  
Քրիստոս,, (ա . Առնիժ . դ . 11) : Քրիստոս է զլուխ Եկե-  
ղեցւոյ “Եւ զնա եղ զլուխ ՚ի վիրայ ամենայն իրիք Եկեղեց-  
ւոյ, որէ մարմին “Յորա,, (Եփես . ա . 13) : Եւ այս երկու  
ծայրի մէջ՝ որի մէկն է հիմքն և միւն է զլուխն, բովան-  
դակւումէ բոլոր շինածքն՝ որք են հաւատացեալքն, և կո-  
չին մարմին : Եւ ի՞նչպէս կարելի է առաքելոց կամ նոցա-  
յաջորդներուն ասել հիմն կամ զլուխ, երբ որ նոքա իբրև  
մարդ մահկանացու են : Իսկ Քրիստոս է անմահ, և Խոր  
զլուխ լինելն ցոյց տալու համար ասաց թէ “Ես ընդ ձեզ  
եմ զամենայն աւուրս մինչեւ ՚ի կատարած աշխարհի,, (Մատ .  
իը . 21) : Ինչպէս զլուխն անրաժան է մարմնոյ հետ մինչեւ  
մահը, այսպէս էլ Քրիստոս մեզ հետ է մինչեւ աշխարհի  
վերջը :

Ինչո՞ւ են պապականերն ասում թէ սուրբն Պետ-  
րոս է զլուխ առաքելոց : Եւ Հռովմայ եկեղեցին  
է զլուխ և օրէնսդիր ամենայն եկեղեցեաց :

Հռովմայ պապելն սկզբից մինչեւ ցայսօր լուած փա-  
ռասիրութեամբ անւանում են իրանց առանց մէկ հաստատ  
փաստի զլուխ ընդհանուր եկեղեցեաց, և Հռովմայ եկեղե-  
ցին օրէնսդիր ընդհանուրին, ուստի նոցա եկեղեցւոյ մասեւ  
նաղիիներու գրւածքներումն՝ մանաւանդ պապակաւան Մը-  
խիթարեան միաբանութեան՝ թէ Ա ենեալի, և թէ Ա ենայ,  
անուում ենք որբոյն Պետրոսի համար, որպէս թէ Քրիստոս  
կարգել է զնա զլուխ և միապետական իշխան միւս

առաքելոց վերայ, և նորա կեղծեալ յաջորդներն (սպազերն), ունին այդ տիտղոսը, ուստի առաջ բերենք այս տեղ նոցա պատճառները և մեր ցրումն այն երազաբանութեանց :

Ա. Պապականներն Պետրոսի կարծեցեալ գլուխ լինելը հիմնում են նախ՝ Քրիստոսի խօսքի վերայ, որ ասաց Պետրոսին նորա գաւանութեան համար “Եւ ես քեզ ասեմ զի գու ես վէմ, և ՚ի վերայ այդի վեմի շնուցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց վնա մի՛ յաղթահարեցին,, (Մատ. Ժզ. 16, 18): Այս բանի մէջ ամենեւն չենք տեսնում, թէ Քրիստոս տւած լինի Պետրոսին մէկ աւելի իշխանութիւն՝ քան զմիւս առաքեաները, մանաւանդ ապառնի բայն շնուցից (Կշնեմ) յայտնի տեսնուումէ՝ որ ոչինչ տւել, այլ միայն է խոստումն, զոր յարութենից յետոյ տւաւ հաւասարապէս բոլոր առաքելոց, իսկ Պետրոս որ քան զմիւս առաքեալը առաջ տւաւ իւր գաւանութիւնը թէ “Դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ կենդանույ,, : Ա ան որոյ իբրև վարձ ստացաւ պատուի առաջնութիւն, և ոչ թէ իշխանութիւն նոցա վերայ, զի և միւս առաքեալքն ունեին Պետրոսի հաւատն, ինչպէս Քրիստոս մի և նոյն ժամանակն ասաւ, “Յայնժամ սաստեաց ամենեցուն. զի մի՛ ումեք ասասցեն թէ նա է Քրիստոսն,, (Մատ. Ժզ. 20):

Բ. Ա էմ կամ հիմն է փոխաբերեալ բառ, և հին վարդապեաններից շատերը ուրիշ ուրիշ մաքով մեկնեցին, ինչպէս Օգոստինոս (Մեկն. Յով. Ճառ. 114), Հերոնիմոս (Մեկ. Մատ. է. զլ.): Թակողորիսոս (Թակող. Մեկ. ա. Արնթ. դ. զլ.): Իրան Քրիստոսին իմացան համեմատելով Սուրբ Գրքի հետ թէ “Դիմին զոր անորդեցին շնորդքն, նա եղել գլուխ անկեան,, (Մատ. իա. 42): “Այսպէս ասէ Տէ՛ր Տէ՛ր ահաւասի՛կ ես գնեմ՚ի հիմունս Արօնի զմէմ, բազմապատիկ ընտիր զլուխ անկեան պատուական՚ի հիմունս նորա, և որ հաւասասցէ ՚ի նա մի՛ ամաչեցէ,, (Եսայ. իզ. 16): “Ա հաւասիկ դնեմ՚ի Արօն զքար գայթակղութեան, և զմէմ”

զլորման, և ամենայն որ հաւասայ ՚ի նա, մի՛ ամաչեցէ,,  
(Հռով. թ. 33: ա. Պետ. բ. 6: Տես և է. 8): “**Վ**շիմ՝  
այլ ոչ կարէ զնել, քան զեգեալն, որէ Յիսուս Քրիս-  
տոս,, (ա. Կողնթ. դ. 11): “**Ե**ւ ամենեքին զնոյն հոգեոր  
ըմպելին արրին, զի ըմպէին ՚ի հոգեոր վիսմէն, որ երթայլ  
զշետ նոցա, և վէմն եր՝ ինքն Քրիստոս,, (ա. Կորնթ. ժ.  
4): **Ե**թէ պապականներն համաձայնին յիշեալ վարդապետաց  
մեխութեանը՝ որք Լատինք են, այն ժամանակ չեն տաել,  
թէ Պետրոսն է վէմ կամ հիմն։ **Ե**ւ ոմանք ես, ինչպէս Հե-  
լլարիս, Ասկերերան, Քրիզոր Կիւսացի, Ամբրոսիոս, Մեծն  
Գրիգոր Պառ, Թճոգորիոս, Լէոն Ա. և այլն։ Սոցահետ  
և ոմանք մեր վարդապետներից վէմ բառը իմացան Պետրոսի  
հաւատը և գաւանութիւնը, և ոչ թէ մէկ առաւելութիւն  
միւաների վերա։ **Ե**ւ շատերն էլ վէմ անունով իմանում են  
տաճարիուսին հաւատապէս համաձայն սուրբ Քրքին, ըստ  
այսմ “**Ը** ինեալք ՚ի վերայ հիման առաքելոց և մարդարէից,,  
(Եփես. թ. 20): “Պարիսակ քաղաքին ունէր հիմունա եր-  
կոտասան, անուանք երկոտասան առաքելոց գառինն,, (Յայտ.  
ի. 14): **Ա**յսպիսի մեխութիւն տալիս են՝ Որոգինէս (**Ճ**առ-  
ա. մեկն. ժղ. զլ. Մատ.): **Ն**երոնիմոս (զիրք ա. ընդդէմ  
Յովինիատեսնց)։ **Օ**դոստինոս (**Ճ**առ. ժէ.): **Լ**էոն Ա. (բան  
գ.՝ ՚ի տարեդարձ)։ **Թ**ճովիլակոս (Մեկն. այսր բնաբանի)։  
**Ե**ւ այսպէս չէ կարելի երեակացել, թէ Պետրոս է մապե-  
տական իշխան, այլ նո է լոկ հաւատացող և քարոզող։ **Ե**ւ  
ինքն Պետրոս այդ անունը տալիս է ամենայն քրիստոնէից տ-  
սելով՝ “**Ա**ռ որ մասուցեալ էք ՚ի վէմն կենդանի (՚ի Քրիստոս)  
և զուք իրեւ զիէմ կենդանի շնիք տաճար հոգեոր,, (1 պետ.  
բ. 4): **Ո**ւրեմն վէմ բառով չէ կարելի իմանալ միապետու-  
թիւն ինչ Պետրոսի մէջ։

**Գ.** **Տ**եսնենք հիմն Միսիթարեան միաբան Քարքիէլ  
վարդապետի զրւածքը վէմ բառի վերայ, որ **Վ**արականի բա-  
ցարութեան մէջ (երես 131 և 804) կամենալով իրա ուղա-

ծի պէս հաստատել Պետրոսի կարծեցեալ զլիաւորութիւնը  
միւս առաքելոց վերայ՝ Արքաս բառը թարգմանումէ զլուխ,  
որ մեծ սուս է, որովհետեւ Արքաս է Սաորոց բառ, որ նրա  
շանակէ վէմ, քար: ապառաժ, զօր Յաղաճաննէս Աւետարա-  
նիչն թարգմանումէ յունարէն Փէդրայ, Փեդրոս “Հայե-  
ցեալ ընդ նա Յիսուսի առէ գու ևս Միմն որդի Յովան-  
նու, գու կոչեսցիս Արքաս, որ թարգմանի Պետրոս,, (զլուխ  
ա. համ. 42) և Հայերէն վէմ, ուրեմն ի՞նչպէս է ասում  
թէ Յունաց բառ է, երբ որ յունարէն զլիին ասումնն Կի-  
ֆալի և ոչ թէ քեֆաս, իսկ Պողոսի թղթոց մեկնու-  
թեան մէջ (Հատ. բ. երես 342) ասումէ թէ քեֆաս բառն  
է ասորերէն: Ահա՛ ուզզախօս մարդ, որ շարականի բացա-  
տրութեան մէջ առել է թէ Յունաց բառ է, իսկ Պողոսի  
թղթոց մեկնութեան մէջ, թէ Սաորոց է: Տեսար Միսի-  
թարեան միաբանութեան հաւատարմութիւնը՝ որոց կուրօ-  
րէն մեզմէն շատերը հետեւում են: Թէպէտ մեր շարականը  
ասումէ Պետրոսի համար զլուխ առաքելոց, բայց ոչ  
ինչիշխանութիւն չէ նշանակում, այլ թէ Պետրոս էր զըլ-  
խաւոր, առաջին և աւագ առաքելոց, ինչպէս անմում ենք  
ուսումնարաններում. որ յառաջադէմ աշակերտն լինում է  
զլիաւոր կամ առաջին առանց մէկ իշխանութեան: Ահա  
և Յակոբ առաքելոց համար է ասում “Սա եղել զլուխ ա-  
ռաքելոց սրբոց,, և Անդրէան էլ Պետրոսի հետ կոչումէ  
վէմ: “Հարազատ վէմք հաւատոյ Պետրոս և Անդրէաս,,  
(կան. իս.) բայց չէ կարելի կարծել մէկին կամ միւսին զը-  
լուխ առաքելոց, վասն զի զլուխն պէտք է մարմին ունենայ,  
ինչպէս մարդն զլուխ է կնոջ, պատճառ որ կինն նորա մար-  
մին է, և թէ Պետրոս եկեղեցւոյ զլուխ է՝ ուրեմն եկեղե-  
ցին նորա մարմինն է, որ Սատուած հետուանէ մեզմէն այդ-  
պիսի հերձւածողութիւն ընդգէմ Սատուածաշունչ զրքին,  
որ սովորեցնումէ մեզ թէ՝ Կրիստոս է եկեղեցւոյ զլուխ՝ և  
եկեղեցին է Կորա մարմին: Ուրեմն Պետրոս չէ զլուխ եկե-

զեցւոյ, այլ նախապատճւ անդամ՝ եկեղեցւոյ մարմնի, միացած միւս անդամներով մէկ զլիսի հետ որ է Քրիստոս :

Դ. Երկրորդ պատճառն այն է, որ ասաց Քրիստոս Պետրոսին «Եւ ասաց քեզ զփականս արքայութեան երկնից, զի զոր միանդամ կապեսցես յերկրի, եղեցի կապեալ յերկնա, և զոր արձակեսցես յերկրի, եղեցի արձակեալ յերկինս,, (Մատ. ժա. 19): Այսպէս են մեինում պապականներն, ով որ ունի երկնքի արքայութեան փականքը, ու կապելու և արձակելու իրաւունքը, նա է ամենքի վերայ գլուխ և միապետական իշխան, և այս իրաւունքը ստացաւ Պետրոս և ոչ թէ միւս առաքեալքն, ուրիշն ասում են Պետրոս է գլուխ՝ և իշխան առաքելոց, և այս իշխանութիւնը անցաւ դէպ ի նորա յաջորդներն—Հոռոմայ պապերն, և ո՛չ ուրիշ եկեղեցեաց հայրապետներն : Այսպիսի մեինութիւնը՝ չէ արդեօք ծիծաղական ու երեխայական, որ պարզ բանը, զօռով, ծըռում են, չէ որ յայտնի երեխումէ, որ Քրիստոս այն ժամին ոչինչ չառաւ Պետրոսին, և ո՛չ ասաւ թէ Տամ քեզ ըզ փականս, կամ առ զփականս, այլ թէ Տաց (կուտամ) որ ապառնի է նշանակում, և իսկ առալ եղաւ յարութեան յետոյ ինչպէս զրումէ Յովհաննէս աւետարանիչ «Ասէ ցնոսա գարձեալ՝ ողջոյն ընդ ձեզ, որպէս առաքեաց զիս Հայր իմ, և Ես առաքեմ զձեզ, և զայս իրրե ասայ Յիսուս՝ փչեաց ինոսա և ասէ առէք Հոգի սուրբ, եթէ ումեք թողուք զմեզս թողեալ լիցի նոցա, և եթէ զուրուք ունիցիք կալեալ լիցի,, (Յովհ. ի. 20—22): Ահա փականքի ու կապելու և արձակելու իշխանութեան իսկապէս տալն, զոր Քրիստոս հուասարապէս շնորհեց տասնումէկին : Ուրիշն՝ ո՛չ Պետրոս և ո՛չ նորա ինքնակրոչ յաջորդներն չեն ամենեին միայնակ իշխան կապելու և արձակելու, և այս փականքը առանց բացառութեան յանձնեցաւ բոլոր առաքելոց, և յարութիւնից յառաջ էլ ինչպէս զրումէ Մատթէոս աւետարանիչ Քրիստոսի խօսքը «Եթէ մեղեցէ քեզ եղեայր քո, երթ յան-

զիմանեա զնա, յորժամ գու և նա միայն իցեք . . . ապա  
թէ ո՛չ լուիցէ քեզ, առ ընդ քեզ միւս ևս, կամ երկուս . . .  
իսկ թէ և նոցա ո՛չ լուիցէ ասասջեր յեկեղեցւոց, ապա թէ  
և եկեղեցւոյն ո՛չ լուիցէ եղեցի քեզ իբրւ զհեթանոսս և ըզ  
մաքսաւոր : Ամէն տսեմ ձեզ, զոր կապիցէք յերկրի՝ եղեցի  
կապեալ յերկինս, և զոր արձակիցէք յերկրի՝ եղեցի արձակեալ  
յերկինս,, (Մատ. Ժզ. 15 18): Այս բանիս մէջ նկատե-  
լու են նախ՝ որ Քրիստոս առաջ եզակոն բառով տալով  
Պետրոսին արքայութեան փականքը, այս տեղ ցոյց է տալիս  
թէ նոյն իշխանութիւնը ՚ի գէմն նորա տւել է և միւս ա-  
ռաքելոց՝ տսելով զոր կապիցէք և զոր արձակիցէք :  
Երկրորդ՝ առաքելոց չէ տալիս բոլորովին բացարձակ իշխա-  
նութիւն ինքնազլուխ դատապարտելու մէկին կամ միւսին,  
այլ տսել Եկեղեցւումն, և պապականները Եկեղեցի բառը ի-  
մանում են առաքելոց ժողովը : Ուրեմն ժողովն ծայրադրոյնէ  
իրաւունքով քանի ո և իցէ առաքեալ : Երրորդ եթէ պապա-  
կաններու կարծիքով Պետրոս էր զլուխ Եկեղեցւոյ, ապա հարկ  
էր Քրիստոսի հրամայել առաքելոց “Եթէ ոչ լուիցէ քեզ  
ասասջեր Պետրոսի, և թէ Պետրոսի ոչ լուիցէ եղեցի քեզ  
իբրւ զհեթանոսս,, , բայց չյիշեց նորա անունը, այլ Եկեղե-  
ցին կարգեց վերջին դատաւոր առաքելոց : Ուրեմն Պետրոս  
ոչ զլուխ եկեղեցւոյ, այլ եկեղեցւոյ անդամ իներքոյ գըլ-  
խոյն Քրիստոսի, ինչպէս սովորեցնում է մեզ եկեղեցական  
պատմութիւնն, որ երբ երեւում էին հերձւածողներ և հե-  
րեաիկոսներ, այն ժամանակ ամեն մէկ զաւառի եպիսկոպոս-  
ներն նախ՝ իրանք տուանձին յանդիմնուում էին մոլորւածնե-  
րուն՝ խօսքով և զրով, երբոր չէին լսում, յետոյ մէկքանի ե-  
պիսկոպոսաց ձեռքով, սրանց էլ երբ ականջ չէին դնում, այն  
ժամանակ մասնաւոր կամ ընդհանրական ժողովք էին անում  
հոգեոլորականներից և աշխարհականներից, որ քննելով նոցա  
մոլար վարդապետութիւնքը՝ յանդիմնուում էին և յորդորում  
գալ ու զեզ ճանապարհ, և երբ որ չէին դարձ զալի, նզովում

էին և համարում ինչպէս հեթանոս, այսպիսի ժողովներ լինում էին ամէն մէկ վիճակաւորի կամքով առանց հարցնելու պատի կամքը, որին ո՛չ մի ժամանակ չեն ձանաշել գլուխ, այլ ձանաշել են իրանց հաւասար, և ինքն սուրբ Պետրոս զիտելով իւր հաւասարութիւնը միւս առաքելոց հետ՝ առմէնեին չէ գործադրած, ոչ միայն որսպիսի և իցէ իշխանութիւն, այլ և նշան անդամ այսպիսի բանի չէ ցոյց տւել ինչպէս երեսումէ Գործք առաքելոց և Պողոսի ժղթերի մէջ։

Ըստ ջին՝ Պետրոս ինքնապելու չընարեց Մատաթիային առաքելական պաշտօնում, այլ միւս առաքելոց և հաւատացեալերու կամքով, թէպէտ ինքն ինչպէս նախապատիւ անդամ ժողովին առաջարկեց ընտրութիւնը (Գործ ա. 15—26), Բ. Եօթն սարկաւագներուն ընտրեցին հաւատացեալներն, տասն երկու առաքելոց առաջարկութեամբ (Գործ. գ. 2—7)։

Գ. Քրիստոնէից թլփատելու կամ չլմփատելու համար հակառակութիւն եղաւ Անտիոքում, և Պաւլոս ու Բառնաբաս ինքնազլուխ չկարողանալով վճռել այդ ննդիրը “Եղին ելանել առ առաքեալմն” և առ յերիցունայ յԵրուսաղէմ, և ընկալեալք եղեն յեկեղեցւոյն և յառաքելոցն և յերիցանցն։

Դւ ժողովեցան առաքեալքն և երիցունքն տեսանել վասն բանիս այսորիկ,։ Բայց Պետրոս իրեւ աւագ անդամ ասաց իւր կարծիքը և յետոյ Երուսաղէմի առաջին եպիսկոպոսն Յակոբոս վճռեց բանը, ասելով “վասն որոյ և ես իրաւունս համարիմ, մի՛ նեղել զայնոսիկ, ոյք ’ի հեթանոսաց դառնան առ Ըստուած, այլ տալ թուղթ առ նոսա խորշել ’ի կերակրոց կուոց, ’ի պոռնկութենէ, և ’ի մեռելուոյ և յարենէ . . . . Յայնժամ հաճոյ թուեցաւ առաքելոցն և երիցանցն ամենայն եկեղեցեաւն . . . . զբել առ եղբարս . . . զայս ինչ։ Ըստաքեալք և երիցունք եղբարք . . . . եղբարցդ՝ որք ’ի հեթանոսաց էք՝ ողջոյն. հաճոյ թուեցաւ մեղմիաբան ժողովելոցս, արս ընտրեալս յղել առ ձեղ . . . զի հաճոյ թուեցաւ Հոգւոյն Արբոյ և մեզ. մի՛ ինչ աւելի բեռն դնել ձեղ և

այլն, (Գործ. ժե. 19—30): Դ. Եղի որ Պողոս երկրորդ անգամ գնաց Երուսաղէմ, ժողով կազմեցին Յակոբոս և ամենայն էրեցներն և հաւատացեալներն և ասացին Պօղոսին, “Երդ՝ զայս արա՛ զոր ասեմք քեզ . . . վասն հաւատացեալցն հեթանոսաց՝ մեք ասաքեցաք որպէս ընտրեցաւ, մի՛ ինչ այնպիսի պահել նոցա,, (Գործ. իա. 17—26): Այսոքիկ առաքելականի չորս ժողովներն յայտնի ցոյց են տալիս թէ, Պետրոս ո՛չ մի ժամանակ գլուխ կամ միապետական իշխան չէ եղած, այլ նոցամէն մէկը, մանաւանդ որ երրորդ ժողով քումը, ո՛չ թէ Պետրոսի ասածն ընդունեց ժողովն, այլ Յակոբոսինը, և Պողոս ո՛չ թէ Պետրոսին է զիմում, այլ առաքելոցը, էրեցներուն և հաւատացեալներու բազմութեանը, թող մտապրութեամբ կարդան պապականներն և տեսնեն իւրեանց սիսալն :

Ե. Պապականներու երրորդ վկայութիւն Պետրոսի միաշպետական իշխանութեան համար է այն, որ Քրիստոս երեք անգամ հարցնելով նրան նորա սէրի համար, երեք անգամ հրամայեց արածել իւր ոչխարներուն և զառներուն (Յով. իա. 15—18): Բայց սրա մէջ չկայ միապետութեան նշան, պատճառ որ՝ Քրիստոս երեք անգամ հարցնելով նրան սէրի համար, և յանձնելով ոչխարները, նշանակում էր նրա երեք անգամ ուրացութեան բժշկութիւնը, ինչպէս մեխում էն և կեղեցւոյ աստուածաբան վարդապետն՝ Օգոստինոս, Ամբրոսիոս, Ասկեբրան, Մեծն Տարանել և ուրիշ շատերն, ուրոց գրածքները մէկ տեղ հաւաքեց Ասմուէլ Ղասնակինոս և մեր վարդապետներն էլ այսպէս են ընդունում: “Եւ Պետրոս, անէ, տրտմեցաւ,, զի ասաց նրան երեք անգամ թէ սիրում ես ինձ, և ասաւ “Տէր գու զամենայն զիտես, և դու իսկ զամենայն ձանաշես և եթէ սիրեմ զքեզ,, և Քրիստոս յանձնեց նրան արածել ոչխարները, սրամով բժշկեց միւս առաքելոց միտքը, որ չհամարեն նրան արտաքսւած առաքելական

պաշտօնից ուրացութեան պատճառով՝ ինչպէս Յուդայ Ես-կարիովացին :

Այլ այս տեղ հարկաւոր է իմանալ, որ արածեա-  
բառն չէ նշանակում տիրել իշխել կամ միապետել, այլ  
հովուել որ ամենայն առաքելոց պաշտօնն էր, ինչպէս մեկ-  
նումէ և սուրբն Պետրոս “Երածեցէք որ իձեղ հօգու է  
Եսուսուծոյ, վերակացու լինել . . . մի իրեն աիրելով վիճա-  
կացն՝ այլ օրինակ լինել հօմին (ա. Պետ.): Եւ Քրիստոս  
բացարձակ շասուն երան թէ՝ արածեա՛ զամենայն ոչխարս իմ;  
արածեա՛ զամենայն գառինս իմ, ինչպէս որ ասաւ տասնու-  
մէին “Գնացէք այսուհետեւ աշտիերտեցէք զամենայն հե-  
թանոս (Մատ. իր. 19): Երթայք յաշխարչ ամենայն և  
քաղուգեցէք զաւետարանն ամենայն արարածոց,, (Մարկ. ժե.  
15): Այլ թէ արածեա զոչխարս իմ, արածեա զզառինս իմ,  
որ է հովուական պաշտօն մասնաւորի վերայ, զի երբ որ ոչ-  
խարներն և գառներն Քրիստոսին են՝ ուրեմն առաքեալըն  
մշակներեն և ո՞չ թէ տէր. որոց հաշւումնէ և Պետրոս. և  
իւրաքանչիւր առաքեալ ուր որ քարոզումէր, և եկեղեցի էր  
հաստատում, ինքն էր նոցա հովիւ ինքնապլուխ, չունենալով  
ոչինչ կախումն միւսներից, պատճառ որ հովուապեսի պաշ-  
տօնը առաւ Քրիստոս իւր վերայ ասելով Այս եմ գուռն  
ոչխարաց . . . Ես եմ Հովիւն քաջ,, (այսինքն հովուապես) (Յովէ. ժ. 9—11): Ուրեմն Պետրոս է մշակ Քրիստոսի  
ոչխարներուն, և ո՞չ թէ տէր կամ զլուխ, ինչպէս ասում են  
պապականներն :

Կ արունակեցի :

## ՏԵՐՈՒՄԱԿՆ ԱՊՈԹԱՔԻ

### ՄԵԿՆԱՌԹԻՒԽԻՆ

#### ՍՈՒՐԲ ԵԳԻՑԻ ԱՆՈՒՆ ՔՈ:

Վրիսառոս ուսուցանելով մեզ կոչել մեր Արարէն Հայր, և մեզ էլ Ճանաչել՝ Կորա որդի, շուտով բաց է անում առաքինութեան Ճանապարհը, որ մեր երկնաւոր Հօր նման նութիւնը ունենանք մեր մէջ, որպէս զի կատարեալ որդիք լինինք և նմանինք՝ Կորան, հարազատ որդին իւր հօր նման կլինի, վասն որոյ ասաց „Առորբ եղիցի անուն Քո“, բայց Վրիսառոս սրանով ո՞չ թէ միայն ուզումէր ցոյց տալ՝ Կորա անւան սրբութիւնը՝ որ իսկզեանէ մինչև այժմ և յաւիտեան սուրբ է և միանդամայն ամենասուրբ, Որի անւան մէջ սրբութիւնը կայ մշտնջենաւոր և անփոփոխ, վասն զի ոչիք ոք բարի, բայց մի Աստուած“։ այլ և Կորա անւան փառաւորութիւնը, ինչպէս սերոբէքն էին աղազակում „Առորբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց“։ Կորա անւան սրբութեան հետ աշխարհային սրբութիւնն երբէք չէ կարող համեմատվիլ, ըստ այնմ „Օք ոչ զոյ սուրբ իբրև զՏէր, և ոչ արդար իբրև զԱստուած մեր, և ոչ զոյ սուրբ բաց ՚իքէն“ (ա. Թճագ. թ. 2), այսինքն թէ աշխարհիս մէջ չկայ այն պիսի սուրբ՝ ինչպէս որ մեր Տէրն է, ահա իմ ասածն էլ այս էր, որ Աստուածոյ անւան սրբութիւնը աշխարհումն ոչ մի բանի սրբութեան հետ չենք կարող նմանեցնել։ Եւ Վրիսառոս „Առորբ եղիցի անուն քո“ խօսքերով կամեցաւ ցոյց տալ մեզ և ուսուցանել, որ մենք աղաչենք Աստուածոյն զի իւր

ամենակարողութեամբ տայ մեզ զօրութիւն, որ մեր կեանքը  
այս աշխարհքի մէջ սրբութեամբ պահպաննք և այս սրբու-  
թեամբ պահպաննեն ինչո՞վ կլինի՝ եթէ ոչ «Սորա պատւի-  
րանքները պահելով, որոց մէջ կայսնումէ սրբութիւն, զոր  
Քրիստոս նմանեցնումէ լըսին, որ նա ոչինչ անմաքրութիւն  
չի առնուլ, այլ իւր զոյսութիւնը պահպանումէ առանց մէկ  
որ և իցէ կեզտի, և հալածումէ խաւարը, ըստ այնու, այն-  
պէս լուսաւորեացէ լըս ձեր առաջի մարդկան, որպէս զի  
տեսցին զգործա ձեր բարիս և փառաւորեացին զայր ձեր՝  
որ յերկինս է» : Եւ այսպէս աղաչումէնք, որ զօրացնէ մեր  
հոգեկան կարողութիւնը ունենալ մեր անձին մէջ սուրբ վարք,  
զի մեզմայ ամենքն էլ փառաւորեն Աստուծոյն, ինչպէս պա-  
տահումէ և մեր կեանքի մէջ էլ, երբ որ մի հօր որդիք լե-  
նում են լաւ զասախարակւած և բարերարոյ՝ երանի են տա-  
լիս նոցա հօրը, և այն է նորա աննան փառաւորութիւնը :  
Եւ որովհեաւ մենք էլ կարողացանք Աստուծոյն մեզ Հայր  
կանչել, ուստի պէտք է մեր հօրը նմանսինք, որ երկնացինք  
և երկրայինք ճանաչեն թէ Ճշմարիտ որ Աստուծոյ որդիք  
ենք : Եւ ո՞րն է այսպիսի նմանութիւնը, եթէ ոչ «Սորա  
անունը սուրբ պահել մեր բարի գործքերով» :

**ԵՄՈՒԿՆ ՎԲՈ:** Մեզանում առհասարակ ընդունված  
է ԵՍՈՅԱՌԾՈՅ անունը, բայց այս չէ յատկապէս «Սորա  
անունը, որ կարողանայ մեզ իսկապէս «Սորա ինչութիւնը ցոյց  
տալ, այլ Աստուծած՝ նշանակումէ Ստեղծօղ, նոյնպէս և  
ուրիշ անուններ էլ ենք տալիս, որք վերաբերվումէն «Սորա  
յատկութեանց և կատարելութեանց, Արարիչ, «Սալախա-  
նամնղ և այլն :

Երբեմն անունը կնշանակէ հաւատարմութիւն և զօրու-  
թիւն, ինչպէս որ Դաւիթ տաաց Գաղթաթին,, Դու զաս  
՚ի վերայ իմ սրով և գեղարդեամբ և տապարաւ, և ես զամ  
՚ի վերայ քո անուամբ Տեանն զօրութեանց ճակատուս Իս-  
րայէլ՝ զոր նախատեցեր այսօր» (տ. Թագ, ժէ. 45) : Եր-

բեմն անունը կնշանակէ փառք, և հէսց այս մտքով է զործածւած „Հայր մերումը“ և Խնքն Աստուած յայտնեց, որ իւր անուան փառքը ոչ ոքի չի տալ „Ես Տէր Աստուած՝ այս է անուն իմ, զփառս (անուան) իմ պյլում ոչ տաց, ոչ բզքաջութիւնս իմ գրօշելոց“ և ուրիշ աեղեր էլ թէ „Ա անձեր անուն իմ հայհոյի ՚ի մէջ հեթանոսաց“, այսինքն թէ ձեր համար իմ անուան սրբութեան փառքը անարգւումէ հեթանոսներու մէջ, այլ պէտք է սուրբ պահել՝ ինչպէս որ սերովեէք „Սուրբ, սուրբ, սուրբ“ ասելով հետևեցրին՝ ովէ տմենայն երկիր փառօք “Եորա“:

Աւրեմն ս՞րբան մեծ և օգտաւէա պարզե է տւած մարդուն, Աստուծոյ, Հայր լինել մարդկան, մինչև անգամ հըսրեշտակներն չունին իշխանութիւն այս ասելու, թէպէտ նոքա հզօր են և հոգեւորներ, բայց սպասաւորներն են և ոչ որդիք։ Խակ գու ո՞վ մարդ՝ համարձակ աղաղակում ես, „Հայր մեր որ յերկինս ես։ Սուրբ եղեցի անուն Վոռ։ Աւրեմն զգուշացի՞ր, որ չարութիւնից հեռանաս և ինչպէս երկնաւոր Հօր որդի՝ չարհամարես, և “Եորա անունը սուրբ պահպանես քո մէջ։ Եւ միթէ այն մարդն կհամարձակի առաջ կանգնիլ և ասել թէ „Հայր մեր որ յերկինս ես։ Սուրբ եղեցի անուն Վոռ։ երբ նա իւր կեսանքն անառակութեան մէջ է վարում և Աստուածային փառքի և սրբութեան կնիքն ունենալով իւր ճակատին և քրիստոնեայ անունն էլ իւր վերայ՝ ընկած լինի մոլութեան մէջ, և անդոսնելի կրքերը և արարածները և երեւակայեալ բաները իւր համար աստուածացրած իբրև մէկ սուրբ պաշտէ նրանց, որպիսիք են որովայնապաշտութիւն երեսապաշտութիւն, փողապաշտութիւն, մարմնապաշտութիւն, փառասիրութիւն և այլն։ — Աչ, ոչ, ոչ երբէք չէ կարող ասել, վասն զի նորու պատճառաւ անարգւումէ Աստուծոյ անունն։ Երանի թէ մտածէր այնպիսին թէ ի՞նչ օգուտ ունի Աստուծոյ անունը սուրբ պահպանելով, մտածէ թէ աստուածային պատիրանքներն երջանկացնում են մարդոյն,

թէ այս աշխարհում և թէ այն աշխարհում, որովհետեւ  
Քրիստոսի քարոզածները աւելի սուրբ և երջանիկ են պահ-  
պանում մարդոցն և ամենքի հետ սուրբ սիրով է կապում,  
մինչև Աստուծոյ հետ, ինչպէս որդւոյն հօր հետ։ Բայց  
ովք վերջին կորութեան, երբ մենք մեր վնասները չենք տես-  
նում և Աստուծոյ անունը անսուրբ ենք պահպանում, ա-  
նարգում և սոսոթեամբ աղօթում, չմտածելով Աստուծա-  
յին վճիռը արւած մարգարէի բերանով, „Ոչ թէ Դու այն  
Աստուծ ես, որ կամիս զանօրէնութիւն, և ոչ բնակին առ  
Քեզ չարք, անօրէնք մի՛ բնակիսցին առաջի աշաց Քո։  
Ասեցեր զայնոսիկ, որք գործեն զանօրէնութիւն» (Ապ. ե.  
5, 6)։ Աւրեմն աղօթքի ժամանակ պէտք է ուսանել Ճշմար-  
տախօսութիւն, ասկա և աշխարհում Ճշմարտազործներ կե-  
րեան, և այն ժամանակը բոլորովին կթողնեն և կհեռանան  
անդոսնելի կրթերին, արարածներին և երեակայութեանը ծա-  
ռայելուց՝ իբրև Աստուծոյ. կարբուն նոցա մոքերը և հա-  
մարձակ կաղաղակին

### Եկեղիք Երբէջութեալիքն աթու։

Մեր ուսուցիչ Քրիստոսն իւր ուսուցած աղօթքով կա-  
մենումէ մարդոց միաքը ոգեսրել և դարձնել զէպ ի երկին-  
քը և նրա մեջ երեկոած Ճշմարտութիւնները, ասելով „Ե-  
կեցէ արքայութիւն Քու, Խեքն արքայութիւնն (ասէ Ե-  
զեւէ) ուսուցանումէ խօսել իւր համար „Յաշխարհի էր և  
աշխարհ Ասփաւ եղե՛ և աշխարհ գւառ ոչ ծանեաւ» (Յով.  
ա. 10)։ Ուսուցանումէ Հայր ասել, որ „Երան միայն զի-  
տենաս աշխարհի Արքիւ, արարչութեամբ՝ բոլորն, որդե-  
զրութեամբ՝ միայն մարդուն, որ ստեղծեց, նոյն և արքայ .  
և որ եկաւ՝ նոյն և Ասրա արքայութիւն . . . . : Երբ որ  
Աստուծ ամենքի Հայր է. Քրիստոս ամենքի եղբայր է:  
Եւյ բոլոր պարզեները մեծ են քան առաջին արարչութեա-  
նը, զի այն ժամանակ Աստուծոյ պատկերի նման եղեւ  
մարդ, աէր և իշխան լինելով բոլոր արարածների վերաց, և

երբ որ այն արքայութիւնը կարուսինք Քրիստո զարձաւ  
մարդ՝ որ իւր գօրութեամբ մեղ արժանացնէ կրկին այն  
արքայութեանը, որի մէջ դանվումէ ամենայն առաքինութիւն,  
բարութիւն, ճշմարտութիւն և հանգստութիւն, և բզիւում  
են Աստուծոյ սէրից, այն արքայութեանը՝ որի մէջ Աստուծ  
ինքն խօսումէր մարդոյ հետ, որ կողնելով մարդ իւր ան-  
հնապանութեամբ դրկւեցաւ այն իշխանութենից, երբ որ  
ոչինչ մարմնական աշխատութիւն, նեղութիւն, հոգս և ար-  
կարութիւն չունէր, այլէր ամենայն կողմից հանդիսաւ, բայց  
Քրիստոս գութ շարժելով եկաւ և գարձեալ եղբայր անուա-  
նեց այն անհնապանութ բանական արարածին և սորվեցրեց ա-  
սել աղօթքի ժամանակ ։ Եկեւցէ արքայութիւն Քու, ու  
թէ այն, թէ Աստուծոյ արքայութիւնը գայ և մեղ վերայ  
տարածւի, որ խաղբանէ անսակ ։ Խորա թագաս որութիւնը ինչ-  
պէս է երկնքումն, նոյնապէս և աշխարհում, այլ ։ Խորա շնոր-  
հական արքայութիւնը որ իւր կամարաների վերայ է միշտ,  
և մենք ցոյց տանք մէր հապատակութիւնը և հնապանու-  
թիւնը գէպ ի ։ Խորա արքայութիւնը, տաելով ։ Եկեւցէ ար-  
քայութիւն Քու խնդրում ենք Աստուծանից, թէ Աս-  
տուծ, Քո ամենակարողութեամբ տար մեղ գօրութիւն, որ  
Քո պատիրանքներին հնապանութելով և կատարելով իւրա-  
քանչեւրս լինինք Քեզ բնակութեան տաճար և այն ժաման-  
անակ կրայ մէր վերայ Քո արքայութիւնը, և մենք կլինինք  
թագաւորութեանդ հաղորդ, որով կփայելինք յաւիտենական  
երջանկութիւնը ։ ։ Եկեւցէ արքայութիւն Քու կամենումէ  
այս խօսքերով ցոյց տալ որ երբ աշխարհի ամենայն ցանկու-  
թիւններից և չարութիւններից կհեռանանք և մէր միտքը և  
աջքը կցցենք գէպ ի երկնայինը, այն ժամանակ Աստուծոյ  
արքայութիւնը կաիրապեաէ մէր վերայ, և մէր տէր և իշ-  
խան կլինի Յիսուս Քրիստոս, որից ամենայն բարութիւն  
բղխումէ, և որ Խնքն է աղքիւր կենաց ։ Խնչպէս նախ քան  
պատիրանագանցութիւնը մարզս նման էր Աստուծոյ ըստ

պատկերի իշխանութեան, այնպէս էլ զինի նորա կնմանով  
Ասոււծոյն սրբութեամբ և կլինի կատարեալ իրրե Ասոււծ,  
ըստ այնմ „Եղերուք կատարեալ, որպէս և Հայրն ձեր երկ-  
նաւոր կատարեալէ” : Եւ Դաւիթ մարդարէի և թագաւորի  
նման ոչ աշխարհիս վայելչութիւններով հպատանատ, և ոչ  
տրտմականներով զիջանել, այլ երկումն էլ համարել անցաւոր  
և ասել „ես արդարութեամբ երեւցայց երեսաց Քոց և յա-  
գեցայց յերեխիլ փառաց Քոց” (Մազ. ժղ. 15) . և մեր  
Ճշմարտապէս աղօթելու վճիռը „Եկայք օրհնեալք Հօր ի-  
մոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւն ՚ի սկզ-  
բանէ աշխարհի” (Մատ. իւ. 34) :

## ԵՊԵՑԻՆ ԿԵՄՐԻ ՅՑՈ

### ՈՐՊԵՍ ՅԵՐԱԿԱԾ ԵՒ ՅԵՐԱՐԻ

Մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսն, „Եղեցին կամք Քո  
որպէս յերկինս և յերկրին ասելով սովորեցրեց մեզ երկու զԵ-  
խաւոր լան, առաջին՝ հնազանդութիւն և երկրորդ՝ ասո-  
ուածանմանութիւն :

„Եղեցին կամք Քոս ասելով ցոյց ենք տալիս մեր հը-  
պատակութիւնը և հնազանդութիւնը Ասոււծոյն՝ թէ երկ-  
նաւոր Հայր թող Քո կամքդ լինի, և ոչ մերը, ո՛վ Աս-  
տուած մեր շմիքը կխնարհեցնենք Քո օրէնքների լծի տակ.  
Քո առաջ մենք միշտ տկար ենք, վասն որոյ մեր կամքը ոչ  
երբեք չէ առաջ զնում առանց Քո կամքի, որովհետեւ Քո  
կամքը միշտ առըրք է, և մարդոյ կամքն էլ ուզում ես որ  
միշտ սուրբ լինի, որ Քո արքայութեանդ արժանի լինինք :  
Այս մի և նոյն բանը տեսնում ենք և այս աշխարհում, երբ  
որ որդիքը կամ ստորագրեալները կատարումեն իրանց հօր,  
կամ մեծաւորների կամքը, նոքա միշտ վայելումեն նրանցից  
բարութիւն : Այսպէս էլ մարդս կատարելով Ասոււծոյ կամ-  
քը՝ որէ Եղուս պատւիրանքների սրբութիւն և հնազանդու-

թիւն ուսուցանող, այն ժամանակ մարդս լինում է մասնակից և ժառանգ Աստուծոյ արքայութեան։ Աստուածային կամքն պահանջում է ո՞չ թէ միայն իւր օրէնքները կատարել թէ յանձնառականները և թէ հրաժարականները՝ այլ և հաւատարմութիւն գէպ ի Խնքն, յոյալ ունենալ գէպ ի Կոտ և համբերութիւն ամենայն նեղութեան մէջ լարի նպաստի համար։ Հաւատարմութիւն է պահանջում, որ Կորա աշնունը յայանապէս խոստովանինք, որ Կորա անւան պրութիւնը պահպանւի։ Յոյս է պահանջում, որ այս անցաւոր թագաւորներու, իշխաններու, և փառքի վերայ յոյս ցննենք, այլ միայն երկնաւոր Ճօր վերայ։ Համբերութիւն է պահանջում, որ Աստուծոյ անւան համար ամենայն նախատանքի և տանջանք յանձն առնաւ, միաք բերէ իւր վարդապետ Քրիստոսի խօսքը, որ ասաց թէ „Ես եկի, ոչ զե զկամն իմ արարից, այլ զկամն այնորիկ, որ առաքեացն զես“ (Յովէ. զ. 38)։ Եւ ի՞նչ էր Ճօր Աստուծոյ կամքն՝ եթէ ոչ չարչարւիլ մարդոց փրկութեան համար, որ և համբերեց ամենայն անարդանքներին և չարչարանքներին, որով և կարողացաւ ըստ մարմնոց անվախճան թագաւորել ամենքի վերայ։ Այս համբերութիւնը ունեցան հին, միջին և նոր դարերումը Ճշմարիտ աստուածապաշտներին, որք Աստուծոյ անւան համար նահատակւեցուն և Աստուծոյ կամքը կատարելով արժանացան Կորա արքայութեան, ինչպէս ասում է Քրիստոս թէ „Եւ ուր են եմ անդ և պաշտօնեայն իմ եղեցի“ (Յովէ. ժբ. 26)։

„Եղեցին կամք Քո որպէս յերկինս և յերկրի“։

„Արակէս յերկինս և յերկրի“, այսինքն՝ ինչպէս Աստուծոյ կամքը սրբութեամբ կատարում էն հրեշտակներն երկնքումը, Կորա կամքին սպասում էն լսելու և կատարելու սիրով, անդադար փառաբանում էն։ Կորա Աստուածային սէրից պատկառում էն, ծածկում էն իրանց երեսը և ոսմերը Կորա ահազին փառքից, այնպէս էլ առ մեզ նոյնպիսի կա-



## ԱՏՈՐԵԳՈՒԹՅՈՒՆ ԹԵԹՎԱԿԱՋՈՅ

### Ե. ԸՐԴԱԿԱՅԻՐ

1) **ԱՈԼՈՂԵՄ** է արևմտեան կողմք, ունի հարաւից և արեւմից քարաբներ, վերի ծայրը գետի հիւսիս փոքր տեղ է դարիվեր, իսկ նրանից ցածր հարթ (դուզ), այս տեղի բոլոր նառւածքը լիքն էր այդիներազ, և ջրելու ջուրը դաշխ էր **ՕՇԱԿԻՍԻՑ**, որի երկու մասը գնում է գետի հարելք և կոչվում է **Գարախանայ**, և երկրարդ մասը **Աօլօլակի** վերայ: **Այդիները** լաւ գնով ծախեցին ցմնկացազների վերայ մասը մաս, առնողները համարեա՛ թէ չայք են, ուր շինեցին եւրոպացի ձեւերով եռայտարկ քարուկրէ աներ, թողնելով սրահներումը իրանց զւարձութեան համար մեծ մեծ բաղչէք, և շինութիւնը շուտ ժամանակում հասաւ մինչեւ սարի դօշը, սակայն եկեղեցուց շատ են հեռու, թէ էպէտ կենացողները հարուստ են և ունին առանձին կառքեր, բայց միջակ և սոսորին մարդկանց ընտանիքը մեծ նեղութիւն են քաշում անձրեային, ձնային և տօթ օրերումը ժամ գնալու, միայն Որուար 13 տարի առաջ շինեցին քարափի տակը եկեղեցի „**Համբարձման** անունով:

2) **ՏԵՓԻԹԵՊ** կամ **ԳԵՐԵԶԹՈՒԲՆԵՐ** է հիւսիսային և արևմտեան կողմք, տեղը գարիվէր և դարիվուս է, ինչպէս թաճմնողի թաղը. աեղ գարուփոս ինչպէս **Ալաբոզկէն**, և տեղ հաւասար, որ է ջրի կողմը: **Այս** տեղ հին ժամանակը կային մի քանի տուն բնակիչք **Աշնքի** և **Ատախլուի** տասցեալ թաղերումը, բայց քաղաքի քանդւելուց

յեաց 1795 թւին միաց անրնոսկ, իսկ հիմայ հասել է շետաւթիւնը մինչեւ Աէրաց, և օր ըստ օրէ աւելնումէ, համարեա՛թէ դարուփոս տեղերն ելլուեցան շինութիւններով:

3) ԽԵՐՓՈԽԳԵՎ ԳԻՒՂՆ՝ է արեելեան կողմը, քարտփի գօշե վերաց, դրութիւնն է դարիփուս և դարիվէր, տեղ տեղ ելլ փոսեր, քարքարոս և աւազոս: Այս անունը սուացել է Խարբուխ էր քնինում, առնումէր մէկ պատիկ նոր կուէ փարչ, մէկ ջուխտ խառակ մոմ, բլիժներ և տիկին\* տանումէր քարտփի զլուխը, վառումէր մոմը, և միւս բաները թողնումէր այն տեղը այժմ ևս այդ մասպաշտութիւնը կայ գուեհիկ մարզկանց մէջ, բայց ի՞նչ անես, որ օգուտ է տալի, սրովհեան մինչի քարտփի զլուխը զնալը, ճանապարհին քրանումէ և հաղը կորչում: Խարփուխի զեղի զլիխն է Պօրշաղալայ փոքրիկ բուրդը, որ շինել է վերջնեւ հերակլ թաղաւորը. Տեր մարզիկ պատմումէն, թէ Կարփալի բանալիքը Թաւրքերի ձեռին էր, մէկ օր, Թաւրքերը մանումէն բերդը և փակում, ապատամբութեան նշան ցոյց տալով հերակլ թաղաւորը իշմանալով այս, սկսումէ Մէտէխից ցել զարբազնները բերդի վերաց, բայց բերդը բարձր լինելով քան զՄէտէխինը շեն ներգործում զիւլլէքը, վասն որոյ զարբազնները գուրս է տանում նաև սիկներով: Առ զեաից և սարքումէ Պօրշաղալի վերաց, որ տեղից նեղացնումէ Թաւրքերին և բերդի բանալիքները յետ է տանում, այս պատճառաւ շինումէ այն տեղ բրջներ և անւանումէ Պօրշաղալայ: Խարփուխ զեղի հիւսային և արեելեան կողմը այզիք են, որք լցւել են շենութիւններով և հասել է մինչեւ Տիւրէմնի զամօկ տասցեալ տեղը, որ է ացգին և մեծածախ աները հայազնի աղին Միրզոյեանցից, և նրանից զէնը շինութեան տեղ շը-

\* Տիկին՝ կոչանակի շորից շինած աղայի կամ աղջկայ փոքր պատկեր:

կայ, այլ մէկ կողմը ջուրն է, միւս կողմը՝ լեռ. քարամբը և  
մէջ տեղը քարվանի ճանապարհը։ Խարբուխի գեղի ցած է  
Խալսթ գահ ասացեալ տեղը, ուր հիմնյ շինած է Թիֆ-  
լիզու Տամօժնայն, որի գրութիւնն է բարձր և տափարակ։  
Վրաց թագաւորները այս տեղ կփարձատրէին արժանաւոր  
մարդկանց, առաջ խալաթներ։

4) «Խարիդալի արևելեան կողմը բաղնիսների մօտ, գե-  
ափը է Աէջ գարատ ասացեալ հին շրջակացն, ուր բը-  
նակւելիս են եղած Աէջիդներ, Պարսից և Օսմանցւոց տէ-  
րութեան ժամանակը, և նրանք էին կառավարիչներ կամ փո-  
խանութներ իրանց տէրութեան և զօրքի պլիստորներ։ Այժմ  
ընակվում են Հայք և մէկ երկու տան տաճիկ։ Շիայի սէ-  
յիդներից մնացած կամ մի քանիսը, որք ստումնեն և այ-  
սօր իրանց հաւատակիցներից ապրուսոր, ըստ առվարութեան։

5) ՀԱՅՈՒՅԵՐԱՅ, է գէտի հիմնիս բարձր և տափա-  
րակ տեղ։ Հալուաբար է բառ վրացերէն ՏՅՉԾԾԾԾ, և նշա-  
նակէ բարձրութա տափը, կամ գէտի գաշար բարձրանալ։  
Այս տեղ հին ժամանակին բերդ է եղած, որ այժմ բոլորու-  
վին քանուած է և աւերակը միայն է երեսում։ Արա շինու-  
թիւնը ոմանք տալիս են Ատրներանհին, որ առաջին թագա-  
ւոր էր Բաղրամունեաց ցեղից, ոմանք, Ոստամ թագաւո-  
րին և ոմանք Վախթանգ Գօրգալանին, վաճն որպէս շր-  
կայ առցյ տեղեկութիւն։

Հերակլ թագաւորի կին Դարեջան թագուհին շինել  
տւառ 1790 թւին շիլտխանի պլիսին քարտփի վերայ փոք-  
րիկ բերդ և մէջը եկեղեցի իրա անունով Դարեյայ, որ  
այժմ կոչվումէ Վանք Պայ Ճառակէրպութեան։  
Հալուաբարու բնակիչները են Երեանի նահանգից, զղա 1752  
թււին տեղափոխեց Թամրազ թագաւորը Վրաց, երբ Եզան  
խանին յաղթեց և քշեց Երեանից մինչև Կահիջեան։ Յե-  
տոյ վերաբնակեցան և Շամքուեցի Հայք, իսկ Ոտոսաց  
կառավարութեան ժամանակը որպէս Թիֆլիզու մօտիկ գե-

գերից, նոյնպէս Վաղախու, Շամշակինու և Աօմսէթի գերից վերաբնակւեցան թէ Հայք և թէ Վրացիք, և լցւեցաւ Հալաբարի գաշտի ընդարձակութիւնը բնակիչներով, և հասելէ մինչք Կառավարութիւնը ասացեալ զիւղը: Առւր գետի ձախ կողմը բարձրացած է միակառուր լեռ քարափ, որի վերայ հնուց եղել է բրջեր լեռնականներու արշաւանքներին գէմ առնելու, ուր Ոտոսք շինեցին բերդ, և կոչումէ Մետեխիս կի զամօկ. Սրա մէջը կայ եկեղեցի Վրաց, որի ձախակողմեան խորանումն ամփոփած է մեծին Վարդան Մամիկոնեանի դստեր Շուշանիկի մարմինը:

6) 1819 թւին եկան Ախրուեմեներպի գաղթականները, որոց մէկ մասը բնակւեցաւ Դիդուբայ Մուշտէիդի այգումօտ, և մէկ մասը գետի վերայ քաղաքի հիւսիսային կողմը: Սրանք, նոր եկած ժամանակը տղբատ էին, բայց հիմա իրանց անդադար աշխատութեամբը հարաստացան և մեծ փող են վաստակում: Կմանապէս մօտեկ ժամանակիս վերաբնակւեցան այն տեղ և Մալականներ, և ջրի ափը, որ կոչվումէ Սաղ, լցւեցաւ շինութիւններով և բնակիչներով:

7) Այս գաղթականներից բարձր է Զուղուրէթը, որի հարաստային կողմն է նոր, և կոչվումէ Սուրբ Կարապէտի Խոէվ: Այս ձորը Վրաց թագաւորութեան ժամանակը էկկու բնակարան էր, և այն կողմի բնակիչները եթէ 10 կամ 15 զինաւորւած մորդիկ չէին հաւաքւիլ միասին, էկկու ահիցը չէին կարող գալ քաղաք, նմանապէս և քաղաքացիք՝ դէպ ի նրանց: Ահա Վրաստանի մայրաքաղաքի վերջին թշւառութիւնը որ թշնամին թագաւորի պալատին դէմուգէմն էր բուն դրած, և չէին կարացել նրա ոտքը կտրել, սրանով հեշտ կարելի է հասկանալ Թմիֆլիզու անցեալ ողորմելի վեճակը: Թմիֆլիզեցի մէկ պառաւ կին, որ իմ շոր լւանողն էր, մէկ օր առաւօտն եկաւ մօտս, մոիկ տւաւ պատուհանից դէպ ի Վաղը, տեսաւ շինութիւններ, և ուղտաներու քարվան, և աշխ քաշելով ասաւ՝ „Փառք

Քիզ Աստուծ, վուր հիմի գինչ ինք, ու Սաղե վրա շինուաթիննիր իմ տէ՛նում, ուղանէրու քարվան, խալիս, առուտուր, Աստուծ հաստատ պահէ Որու թաքաւուրի թախար, նրա թուրը կորուկ անէ: Հարցրի ես, մայր, ի՞նչ կայ ինչ չի համար ես առում. ասաւ պառաւը, թէ՝ սփուրթի, չիս գիղի, էն սուբ Արապիսի խէվը (ձորը) Լէգզու բունակալ էր, արա ո՞վ կարէր մէնակ Սաղը գնալ, ան Կուկիս, օրով ցերեկով սրպանում էին, թանում էին, դերի էին ասմում, տէրուտիրական չունէինք: Մէ օր մէ նիրկարար մարթ շելէքը տանում է ու փոռում է Սաղե վրա, վուր ցամքի, ինքն էլ նուր կարմընջի ըրըջի վրա կանգնած մաիկ է տալի, ծունկալ Լէգզեքը տեհնելով շելէքը, գուս ին վազում խէվէմէն, գալիս ին ու դիմ մէտի մօդ են անում ու տանում, շելէլուտէրէվէմէն ձէն է տալի, ծայղէթ, ծայղէթ, ցիրա, ցիրա աղլիս, (տարէ՛ք, տարէ՛ք, ինն ինն զազ է) միթամթէ շելի թօփը տասը գաղանուց պիտի, ու Լէգզէն ինը զազանուցը լայիդ չի անի տանելու, նրա զիսի պատուիլը գիգենայ, էնգուր չտարան: Վուրթի ջան, միր նիզութինը տռաջվայ ժամանակը վուրն ասիմ, թէ ի՞նչ նիզութենի մէջն է էլի քաղաքը: Աստուծ հաստատ պահէ Որու թաքաւուրին միզ համա, իմ կինարմատ տիզս իլեկը ձեռիս մանելով, թէգուղ թաւրիդ կէհամ, ու չիմ վախէնա, հիմի գտակըդքէշը կոտրէ վուրթէնը գուզիս, էնթէնը զնա: Լըէկէ խանը մինձ պատիւ էր տալի Հայերուն, Գօրլցի մինձ Տէր Սըհակը, ու Ծնէլաւեցի Տէր Ծաղդասարի մամա (Հայը) Տէր Սարդիսը, վուր գուրքէնն քաղաք, մէկը աջ կուզմը կու նըստէր, մէկը ձախ կուզմը պարնինը, նրանցմէն ցածր թաւաղնիրը, նրանք էնէնց պատիւ ունէին, իրանք էլ ախուզախոն մարդիք էին, ամա Գօրլցի Տէր Սըհակիմէն ու Տէր Ծաղդասարիմէն նրանց պէս օչով գուս չեկաւ. Լըէկէ խանը մէ վախտ հագար մարդով գնում է Երևնու վրա կուի, ու գիր է գրում էստի, վուր աղօթք անին, Մէտէխի էգէղեցումը պա-

տարագ ին անում, Աքացիք ու Հայիրն էլ մօդ էլած ին էն զի , էդ վախար Գօրու մինձ Տէր Սլհակը էստի է ըլում , ու կանգնումէ էպէղեցումը քարոզ է տալի , լաւ վառք ու բէրնով , խալի բըղըղալի աղօթք ին անում , Քամթալիկոսը իմանումէ , վուր Հայու տէրտէրը Աքացու էպէղեցումը քարոզ է տախ , հրամայումէ միրուքը զըզդիել . Հայիրը շատ չարանում ին էս բանի համա : Եշէկլէ խանը ախտում է գուշմին , զիր է գրում Դէգօվիլն (թագուհուն) , թէ փառն օրը զալիս իմ : Քաղքի մէլիքը . (Բէհրուդենց ազգէմէն կուլէր) հրամայումէ վուր գուքնիրը կողային վունչ մէ Հայ առաջ ըլ գնայ : Եշէկլէ խանը վուր մօդ է կէնում քախսին , տէհնումէ վուր վունչ մէլիքը կայ , վունչ քախսիցիք , իժում ինքն իրան տառմէ թէ , հալքաթ , իմ տան զլիսին մէ բան կայ , վուր օչով տուաջ չէկաւ , ձին քշած գնումէ տուն , տէհնումէ զիփունանցը սաղ սալամաթ , կանչումէ մէլիքին , ու հարցնում , թէ էս ի՞նչ բան է , — մէլիքն ասումէ թէ , Գօրըցի Տէր Սլհակը Մէտէխումը քարոզ ասաւ , վուր քիզ համա աղօթք անին , ու քու Քամթալիկոս աղպէրը միրուքը պլոկիլ տուաւ , — վո՞ւր օրը , — վլան օրը , ու փլան սհաթին , — Պարունը ասումէ թէ հէնց էդ օրը , էդ սհաթին կոտրեցի դուշմին , ու քշեցի , ու շատուշատ բարգանումէ Քամթալիկոսի արարմունքի վրա , թէ նա վո՞նց համարձակւեցաւ իմ էրդուլ (հաւատարիմ) տէրտէրին էդ անիլ : Խս խօսելումը խաթար ին տալի թէ Քամթալիկոսը զալիս է , Եշէկլէ Պարունը ջալդ (շուտով) մէ փլնջան զահվայ է գուս զըրկում , ու հրամայումէ , վուր սանդղլստի զլիսին իրան տան խմէ ու գնայ , էլ իր էրեսը չը տէհնէ : Քամթալիկոսը , վուր էս խօսքը լսումէ , զլուխը կոացրած՝ մըումըոթալի քաշվումէ իր տուն : Աբա վուրթի , էն վախտվայ իրիցնիրը ինչ պատիւ ին ունեցի , թէ թաքաւուրի մօտ , թէ մինձամինձնէր բու մօտ , զրուստ է , աւելի կարլաւ չէին զիտի , ամա զախ ունէին , խալիսին ձեռումը բոնած ունէին : Վէր ին վաղուցվան իրիցնիրը :

8) ԿՈՒԽԱԾՅԸ, սահմանակից և Չուզուրէթին. սրանք  
են բնական Անեցիք, որ գաղթելով այս կողմը բնակւել են  
Սօմիսէթումը, Օքնծղարօ գեղումը, բայց նեղանալով վեր-  
ջին ժամանակներումը Լէկվերու ձեռքից տեղափոխում են  
Թոփլիկ Առւր գետի հիւսիսային կողմը գաշտի վերայ : Այս  
գեղը արժանայիշատակ կնեալ Աջօնցովի հոգացողոթեամբ  
համարեա՛ թէ երկու վեր երկայնութեամբ մեծացաւ, և  
շինւեցան եւրոպական ձեռվ աներ, և Թոփլիկեցու շատերը  
նոյնպէս Հալւաբարցւոց և Չուզուրէթէցւոց՝ աներ շինեցին  
որ բուն քաղաքից աւելի պայծառ է, թէ տեղադրութեամբ,  
թէ լայն ճանապարհներով և թէ շինութիւններով :

9) ԵՄԵՐԾՎՈՂԻԽ, և Առւր գետի հիւսիսային կողմը,  
ընդարձակ գաշտի վերայ : Այս անունը ստոցել է նաւթի  
աղբիւրներից, որ գետի վերայ քարափից գուրս է գալի : Այս  
տեղը լցւեցաւ բնակիչներով Ոտուսաց ամուսնաւոր զինուրնե-  
րու, և ազա Ոտուս աստիճանաւորներու, Հայք և Արացիք  
և վերաբնակւեցան : Աստ է զինուրական հիւանդանոցը և  
Կօմիսարիատը :

Ահա այս ինն շրջակայքները, որ Արաց թագաւորու-  
թեան ժամանակը տեղ տեղ տասն կամ քսան տուն բնակիչ-  
ներ հազեւ կային, տեղ տեղ էլ ամեննեին չկար՝ թշնամեաց  
ահիցը, այժմ լցւած է քաղմութենով և օրէ ցօր շատանալով  
առաջ են տանում շինութիւնները : Ո՞ւմ շնորհն է այս, և  
թէ ո՞չ Ոտուսաց հզօր թագաւորութեան :

### Բ. ջ. Ե Յ

Թոփլիկու մէջ տեղը անցնումէ ԿՈՒԽՅ գետը, և բը-  
նակիչները միայն այս ջուրն են գործածում : Արա երկու կող-  
մը շատ ջրաղացներ կան, որ պատկանում են Հայոց և Մա-  
լականներուն : Վնձրեային և ձրնային ժամանակը շատ է մե-  
ծանում և բաւական կեսա է առաջ Ասղի վերայ եղած շե-  
նութեանցը, քանդումէ ջրաղացներ, քշումէ լոստեր (առ-

փեր), չորքոսանի առյօնք, նաև և մարդկերանց, մէկ խօսքով ինչ բերանն է ընկնում կուլ է տալիս։ Այս գեար ոչինչ օգուտ չէ տալիս՝ բայց շինութեան գերաններից, որ բերում են Քարթլուց, սրանից ջուր են վեր առնում չարխերով Օրթածալի, Դրահճալի և Դիմուրու այգիքը։ Սա ունի անուշ շահամ ձիներ, որք են վիշտուլ, կապուա, ճանառ, զօջա, օրագուլ և լօքո։ Գուրը պատկանում է Արաց եկեղեցուն, և տալիս են իջարով ձկնորսներին։ Ծարիթեզեցիք, խիստ շատ են սիրում ձկնեղէնը, աւելի թագոյ ձուկը, որովհետեւ գինու մազայ է, վասն սրոյ ինչքան որ շատ ել լինի, թանկ են ծախում, մէկ խօսքով, հոտեցնում են, և ծածուկ զէն են ածում, բայց զինը չեն ցածացնում։

Տացի Առը գեարց, ել չկայ մեծ գետ, այլ մանր գետակներ, որք են, 1) Ա էրայի գետակն, սա ունի մանր ձուկն եւ ջում է Ա էրայի այգիքը։ Ա էրայ անունը առել է Խվերիայ անունից, որ Ա քաստանին ինչպէս առաջ, նոյնպէս և հիմայ առում են Խվերիա, մեր պատմութեանց մէջ մի և նոյն անունը գանում ենք շատ տեղ. և այս գետակը եղել է առչ ման Հայստանի և Ա քաստանի, ըստ որում Ա էրայ գետից դէպ ի հարաւ կոչւում է Սօմիսէթ, այսինքն, Սամիսրէթի, որէ հարաւ, որին տիրել են Հայք, և Հայոց ժողովուրդ են ընակում մեծ մասամբ, և Հայոց իշխանութեան ներփայ է եղել։ Ծակէտ Հայոց պատմութեանը մարկ տալով կատականի Ա քաստանին, ըստ որում Քարթլոս շինեց Որբէթը, որէ Օփրէթ, ուր այժմ բնակիում են Յոյնք, բայց Զամշեանը առնելով Վաեփանոսի Ուսպելեանց պատմութենից, այսպէս է զրում (եր. 67) թէ՝ „Խակ Քարթլոս միւս եղշբայր Հայկայ զնաց յայլ կողմէն հիւսիսոյ ՚ի լեռուն որ կոչի Արմազ և անդ շինեաց իւր տուն և ամրոց, զոր կոշեաց ՈՐԲԷԹԾ յանուն կրասեր որդոյ իւրոյ, որ և այժմ Շամշողի կոչեն։ Վյու բանը ինչպէս երեսում է սխալ է. պատճառ որ, Որբէթը, հիմա զիւղ է և ասպում է Օփրէթ, որ-

բանից կեսօրւայ ճանապարհ հեռու է Շամշուլդէ թերթը, որ  
Աքաց լեզով նշանակումէ երեք նետ, այսինքն սամիշվելդի:  
Ուրիմն Որբեթն ու Շամշուլդէն ջոկ ջոկ են:

2) **Օ**ւաւկիսու գետակն, որի փոքր մասը զալիս է  
Սօլոլակի վերայ և ջրումէ այն տեղի այգիքը, իսկ մնացեալը  
Դաբախանի վերայ և ջրումէ Խալրուխի և Աէյգաբատի  
այգիքը: 3) **Շ**ինդիսու, սա ջրումէ Արծանիսու այգիքը:  
Այս ջրերը չեն գործածում խմելու համար, և թէպէս  
տեղ տեղ կան աղբիւրներ, բայց աղի են և ջուր չլինելու  
պատճառաւ՝ ճանապարհորդները գործ են ածում, որք են՝  
**Տէր Նիկողոսենց** աղբիւրը, Արծանիսու ճանապարհնեն:  
**Օ**ւիրանաւորի և Ուլուբուլաղ: Թիֆլեղ քաղաքու-  
մը Սօլոլակի թաղումը կայ մէկ հատ աղբիւր Հայազգի Պ.  
Գուրգէն Տէր Միքայէլեանցի տան սրահումը՝ որ բղխում  
է քաղաքից և միշտ գործ են ածում նրա ջուրը մօտիկ և  
հեռու դրացիքը, նաև և խմելու:

Առւսակալ Գևեներալ Օտինֆանտէրի Տարօն Ռոգէնը,  
Թիֆլեղ քաղաքը պայծառացնելու և ժողովրդեան հարկա-  
ւորութեան համար, առաջարկութիւն՝ արեց, որ քաղաքից  
դուրս եղած աղբիւրների ջրերը, ով որ իրա ծախուղ քաղաք  
բերէ նշանակած տեղերը, պարզե կտանայ պարանոցի ու-  
կեայ մեղալ: Այդ պարզեները շարժեցին ոմանց փառախ-  
րութիւնը և բերին ջրեր՝ զանազան տեղերից և շինեցին ա-  
ւազաններ մինչեւ 15 հատ, և ստացան մեղալները, բայց  
տասներկուսը ցամքեցան և երեքն ունին ջուր:

Բացի սառը ջրերից, կան և տաք ջրեր հին քաղաքի-  
հարաւից արեւելք, որոց վերայ շինւած են բաղանիսներ, որք են՝

1. **Մէլեքենց**, որ պատկանի Հայկազն իշխան Տէհ-  
րուգեանց, և գլխաւորն է բոլոր բաղնիսների մէջ, թէ  
շինութենով և թէ ջրերով:

2. **Խյլանենց**, որ հիմայ կպատկանի Հայ աղնւական  
Դաւիթ թամամշեանցին և Լատինագաւան աղնիւ-  
Յակոբ Օռւբալովին:

3. Արքի էրի , պատկանեալ Աքաց հոգմոր իշխանութեան :
4. Ու էյթ ըենց , որ կպատկանի այժմ զանազան անձանց ընկերութեամբ :
5. Ռելդի , պատկանեալ Աքաց իշխան Օրբելեան— Վամբակուրեանց :
6. Ալի խան ենց :
7. Թամամամշենց , նոյնպէս ազնիւ Դաւիթթ թռամամշեանցին :
8. Միրզօյենց , ազնիւ Գևորգն Միրզօյեանց իրա տան հիւսիսային կողմը շինեց փոքր բաղնիս Խարբուխի գեղումը :

Այս բաղնիսներից միայն Ռելդի բաղնիսն է կանանց , և ամենքն էլ բացի հասարակաց լացարաններից ունին և առանձին առանձին բաղնիքներ երկու կամ երեք , (զօրուղ) : Տաք ջրերը մեծ օգուտ են ասպիս ընսկիչներու առղջութեանը , եթէ ո՞չ ստորին կարգի մալոդիք , որք չափից աւելի խիճք են գործածում և անպիտան կերակուրներ են ուտում , որ վնասակար են ազնիքներին ու ստամոքսը դիմութեամբ է մարտում , պիտի յառաջ գար կուրծքի և ստամոքսի տկարութիւն և ուրիշ ցաւեր , բայց նրանց մէջ չեն երեսում այս հիւանդութիւնները , ուսափ հաւանական է կարծել , թէ հանքային ջրերը ոչընչացնում են այս տկարութիւնները նրանց ստամոքսի մէջ :

Կարունակեացի :

# ՀՐԵԺԵԾ ԱՐՎԵԼ

— Ո՞նաք բարեաւ :

Չորք և հովեաք, Երինք և Եղուրք անձկութեան,  
— Ո՞նաք բարեաւ

Եսպնջական իմ վեհ սելունդ մարգկութեան,

1. Արհեռանամ ահա դրկացդ հիւրընկալ  
Դառնալ ձմրանն բնակութիւնս, ուր երբ ոք  
Եմրան բայց ին գաներն օւրախ և զւարիժ  
Գամ վերստին ձեզ աւետել շրջան նոր :
2. Պանդուխտ եմ ես օտար երկիր թափառող,  
Չունիմ ո՛չ տուն, ո՛չ բայն, ո՛չ կայք հայատուն,  
Հալածական գառն հողմերի հովերէն՝  
Շրջեմ թէ ուր սրտիս գտնեմ վայր սիրուն :
3. Եպրին՝ զք որ օտարութեանս ցաւազին  
Կարեկցելով զիս կընդունեն բարեպէս,  
Եպրին՝ զք որ տիսուր սրտիս հառաջանք՝  
Սփոփելով զիս ազատեն հոգսերէս :
4. Մնացէք ողջամի, ահա մեկնիմ ես ձեզմէ,  
Օտար երկիր ձեզ անձանօթ ես կերթամ:  
Կանդնել զըսյն իմ անհաստատ ու զարնան  
Զեզընկերել ես կրառնամ միւս անզամ:
5. Գնաս բարեաւ, յաջողութիւն կմաղթեմ  
Քեզ արագիլ ամրան ընկեր հարազատ,  
Բայց մի մնոնար զըսյն որդւոցս տարագիլ,  
Տանել փութով գէպ յարեւելս Եյրարատ :
6. Չես մի զիտեր՝ պանդխտիս բարեկամ,  
Որ հոն մայր մը, խեղճ մայր մը՝ ունիմ անձկայրեաց,  
Լայ և ողբայ բոլոր օրերն իմ կեանքին,  
Երաօսր աչքին, հառաչք սրտին չեն դադրած :

ՀՅԴԿԱԾԵՆԻ  
ՅՈՎԵՅԻՆ ՃԵՆԵՊԵՐՀԻ  
ԵՒ  
ՄՄԵՐԵԿԵՅԻ ԳՏՏՏՏԻ.

Հարադրեաց

Թ Ռ Ա Վ Մ Ա Ս

Հնդկաստանի ծովային ճանապարհի գիւտը :

Աշխարհիս ամենամեծ մասը Ասիայն է, որ գտնվում է արևելքան կիսագնառումը, ու Եւրոպայի հետ միասին մի ցամաք է կազմում, այնպէս որ սոցանից վերջինը ձևանում է իբրև մի թերակղզի, կամ թէ յիշեալ ցամաքի արևմտեան մասը : Համարեա՛ թէ Ասիայի մէջ տեղը—հարաւային լեռնային մասը, մի ժամանակ մարդկային սեռի օրօրոցն էր : Այս տեղ են կատարել հին աշխարհի մեծամեծ պատմաբանական փոփոխութիւնները : Այն ժամանակ արդէն Ասիայի տէրութիւնները բաւականին լուսաւորւած էին, մինչդեռ արևմտեան ժողովրդի մէջ նոր էր սկսել ծագել լուսաւորութեան սկզբունքը : Երկրագնաի այս մասի խորքերից տարածւեցաւ ճշմարիտ Աստուծոյ ուսումը . այս տեղից Արքահամիրա ժողովրդով ուղեսորեցաւ դէպ ի արևմտաք Աւետեաց

երկիրը, վերջապէս այս տեղ Ասիայի, Եւրոպայի և Աֆրիկայի սահմանումը Յիսուս Քրիստոս վարդապետեց իւր բարձր ճշմարտութիւնները:

Ամենայն մտածող և քննող մարդոյ համար, այս աշխարհիս մասը երեկոյ նշանակութիւն ունի: Այնու ամենայնիւ նորա միջն երկիրները, նոյնպէս և նորա արեկելեան, հարաւային և հիւսիսային սահմանները համարեա' թէ լուսաւորեալ Եւրոպային յայտնի չէին: Աղեքսանդր Մակեդոնացւոյ Ա. արշաւանքները համարեա' թէ մոռացութեան տակ էին ընկել: Խոկ միջն գարերում վայրենի ցեղեր յանդրգնաբար յալձակելով դէպ ի Եւրոպայ և մասնաւորապէս աւերելով նրան՝ զցեցին ճանապարհորդների վերայ երկիւղ և նուազեցրին նրանց ցանկութիւնները խորը մանել երկրագնափակ այս մասի մէջ: Կասպից ծովի հիւսիսային ափերից ասիական վրանաքնակները (օրդա) յարձակվում էին: Հոնք Ասիայից դուրս գալով աւերտում էին Եւրոպան, իսկ խաչակրաց ժամանակներումը Եւրոպացւոց արիւնը ոռոգեց ասիական գաշտերը: Յիրաւի՛ թէ և Եւրոպան մի քանի առեկելեան հարաբերութիւններ ուներ արեկելեան հարաւային Ասիայի և իւր բերքերով հարուստ Հնդկաստանի հետ, սակայն այս յարաբերութիւնները կատարվում էին ըստ մեծի մասին Երաբների ձեռքով, ուրեմն չէին կարող լինել Եւրոպացւոց համար այնպէս արգիւնառոր և օպտակար, ինչպէս եթէ իւրանք կատարէին անմիջապէս իրանց ձեռքով այդ վաճառականութիւնը, ու իւրանք տեսնէին այս կողմերը: Բայց և դէպ ի Հնդկաստան ճանապարհորդութիւնն էլ Եւրոպացւոց համար երկարաւեւ, երկիւղալի և թանկ էին նատում: Այս ժամանակում ծովագնաց Հենրիկոս, Պորթուգալցւոց Յովհաննէս թագաւորի որդուն, որ բնութենից իրան անձը նոիրել էր արհեստների և հետաքննութեան, մի բարեպատեհ միտք ընկաւ, թէ արդեօք չէ կարելի Աֆրիկայի չորս կողմը պրալտելով Հնդկաստանի համար բանալ ծովային ճանապարհ:

Կորա միջեւ այդ գոյացած իդէայի (գաղափարի) կատարելազ գործելուն շատ օգնեցին մտաեմաթիդայի և աշխարհագրութեան հիմնական աեզեկութիւնները։ Իրաւ, թէ և այս դործառնութիւնը հիմիկւան աշխարհագրութեան և նորա քարտէզների դրութեան հետ համեմատելով չունի մի առանձին նշանակութիւն, բայց այս չափազանց գժւարէր այն գարում, երբ չկային ոչ մի այդպիսի օդնող միջոցներ այլ և ընդհանրապէս բնաւին ո՛չ մի տեղեկութիւն Ամբիկայի երկայնութեան և լայնութեան մասին։ Այսպիսի դործը կարող էր յանձն առնուլ միայն այնպիսի մարդ՝ ինչպէս Հենրիկոս Պրինցը։ Միայն այսպիսի սաստիկ եռանդուտ (հներդագիտան) մարդը ունեցաւ կարողութիւն իւր բոլոր կենաց ընթացքումը սիրով հետամնուտ լինել այս մեծ դիտաւորութեանը։

Այս բանը յանձն առան կատարելու Յովհաննէս թագաւորի երկու պալատական ասպետները Գօնզալէս Խարկոն և Տրիստան Վաղը, որոց շուտով յաջողւեց գտնել Պօլուսանատ կրդին 1418-ին։ Հետեւալ տարումը նրանք ձեռնարկեցին անել երկրորդ ճանապարհորդութիւնը, և գտնն Մագերայ կղզին։ Բայց այդ ճանապարհորդութիւնը շատ գժուար էր, որովհետեւ նաւախօրները վսիմնալով հասարակածի մօտ այրւելուց արեղական տաքութենից յետ դառն առաջ զնալուց։ Մագերայ կղզին ծածկւած էր շատ թանձր անտառով։ Մեր ծափաղնացները նրան այրեցին։ «Սա եօթն տարի շարունակաբար այլուում էր, մինչև որ բոլոր անտառը մոխիր գարձաւ։ Այս մախիր միջնորդութեամբ երկերը շատ պաղաստու դարձաւ, —ինչ որ ցանում էին բոլորն էլ լաւ էր բուսնում։ Եւ ներկայ ժամանակումն էլ այս երկիրը երեելի է իրան թունդ գինով, որ կանչւումէ նորա անունով Մագերեան գինի։ Այս կղզին երեելի է նմանապէս կանարեան շաքարով։

Պօրտօ — Անտօն և Մագերան Պօրթուգալցւոց գաղ-

թականոցներ դարձան։ Բայց Հենրիկոսը շատ արխութեամբ դէմ կացաւ իրա բոլոր ձեռնարկած յառաջադիմութեան հետ, որ կարողացաւ այս գործը շարունակել, այրեցեալ գօտուց վախեցող նաւավարների երկիւղը և անբաւականութիւնը փարատելով։ Այս 1432 թւին Պալիանէսի առաջնորդութեամբ մի ուրիշնաւ ուղարկեց, որին յանձնած էր շարունակել զիւտը Սփրիկայի ափերից սկսած։ Այս կարողացաւ շուտով Բայագորի գլուխը պատել։

Այս մեծագործութիւնը՝ մի ընդհանրական ուրախութիւն պատճառեց։ ‘Սորա վասքը հասաւ մինչև այն աստիճանի, որ Պալը կոնդակ զրեց, որով սեպհականացան Պորթուգալցւոց յատկապէս իրաւունքները, իրանց գտած երկիրների վերայ մինչև Հնդկաստան։’

Մեր ծովագնացները իրանց ճանապարհորդութիւնը շարունակելով, գուրս եկան ցամաքը Սփրիկայի արևմտեան ափումը. և իրանց հրացաններով հետ ածին իւրեանց հակառակող վայրենի մարդկանցը։

Այս տեղ սպանեցին նմանապէս ծովի որթեր (տուլեն) որոց մորթիքն իրանց համարձակ ճանապարհորդութեան միակ վարձատրութեան փոխարէն եղան։ 1442-ին Պորթուգալցիք այս տեղից գուրս բերին այն ‘Սեպրոսներին, որք շատ բաներով էին զերազանցվում հիւսիսային Սփրիկայի բնակիչ ներից։ Մինչև անգամ իրանց արտաքին տեսքով զարմացրին բոլոր Լիբանանը։ Որովհետեւ Պորթուգալցիք ‘Սեպրոսների հետ Սփրիկայից բերում էին նմանապէս ոսկու աւագ, դորա համար էլ նրանք շուտով գարաբեցրին շարունակել այս ճանապարհորդութիւնը։ Կազմեցաւ մի նոր յանձնարարական ճանապարհորդութիւն (Թքունակութիւն) որ և Պորթուգալցւոց յաջողւեց զանել 1444-ին Բլանկոյի զլուխը. իսկ երկու տարուց յետոյ-1446-ին Պալարի զլուխը, ու այն կղզիները՝ որք գտնւում էին այս տեղից գէպի հիւսիսոյ արևմտուքն, և նրա անունով կանչւում են Պալարի զլուխ կղզիներ։ Հեն-

ըիկոս Պլինցը իւր մահից առաջ\* լսեց ուրախութեամբ, որ  
իրա նաւերը հասել են մինչև Գվինէին, որ աեղից կարող  
էին հետութեամբ ճանապարհորդութիւնը շարունակել դեպ  
ի արեւելահարաւ :

Ասուրեան կզգիները գանելու հետ Պորթուգալց ոց Գվի-  
նէին կալուածները մի առանձին նշանակութիւն ունեցան :  
Աերջին ժամանակներում Գվինէի վաճառականութիւնը այն  
քան բարձրացաւ, մինչև որ Գիերինանոր Հորեց վեր առաւ  
այս երկիրը թափաւորեց, կալուածների համար 500 դուհա-  
տով\*\* (որ է 5857 սուբլի, 50 կոպէկ) :

Պորթուգալցիք 1481 թւին այն տեղ այնքան զօրացան  
մինչև որ Աեղբոսների թագաւորի հետ գաշնակցութիւն  
հաստատեցին : Իսկ Պորթուգալցւոց թագաւորը, որին Պապը  
այս նոր երկրի վերայ հաստատեց, ստացաւ տիտղոս Գվի-  
նէի կառավարիչ :

Բայց ափսո՞ս, որ Հենրիկոսի վախճանելուց յետոյ  
Ալֆանս V-ի թագաւորութեան ժամանակը գալարեցրին  
Պիրինցի սկսած ձեռնարկութիւնը : Բայց այս ժամանակումն  
էլ գտնեցաւ մի այնպիսի ծովագնաց, որ անցնելով հասա-  
րակածը՝ հերքեց այն զարմանալի կարծիքները, որ տառմ  
էին այրեցեալ գոտու ներքին մասի անմատչելի լինելուն հա-  
մար : Յովհաննէս II թագաւորը նորոգեց Հենրիկոս Պլինցի  
պլանը և 1486 թուին հմաւու ծովագնաց Բարդուղիմէոս  
Դեասին յաջողւեց համել Բարեյուսոյ գլուխին և Ափրիկէի  
հարաւային ծայրին : Ապրելի էր թէ այս համարձակ ծո-  
վագնացը այն ժամանակը հասնէր Հնդկաստան, եթէ նորա-  
ճանապարհակիցները չհակառակէին, վախճանալով անծանօթ-  
ծովումը սովամահ մեռնելուց :

Եյս զլիսի ամենայարմար վաճառականութեան հարկա-

\* Վախճանեցաւ 1460 թւականին :

\*\* „Սպանական դուկատու բեալ, ուրեալը 16½ կոպէկ :

ւորութիւնը Ասիայի հետ առաջ Հողակացիները իմացան: 1652-ին նրանք վերեկան այս տեղ ամրոցներ շինեցին, ու լորին բերդապահ զօրքերով:

Գործը մնաց այս գրութեան մէջ, մինչեւ որ 1806-ին, Բարեյուսոյ գլուխը Անդղացւոց ձեռն ընկաւ, բայց կոփեները հարաւային Ափրիկայի տեղական բնակչութեամբ մինչեւ էս օր էլ շարունակւում են: Պորթուգալցւոց թագաւոր Խմմանուէլլը իրան հայր Յովիչաննէս Ռի հետ այս ճանապարհորդութիւնը եռանգով շարունակեց, ու Յուլիսի 9-ին 1497 թւին հմուտ ծովագնաց Ասսկօ-դե-Գամայի իշխանութեամբ ուղարկեց մի նաւատորմիղ (Փլութ), ցաւալին այն էր որ ընտրած էր մի անյարմար ժամանակ այս առաջարկութիւնը կատարելու, բայց նա էլի քաջութեամբ և համբերութեամբ կրեց այս գործը, հեռացրուց ծովային մրրիկները, և իրան իշխանութեան հաշառակողներին:

Երեք նաւով և 160 մարդով իրան նախարգների գտած ծովը անցկենալով, Այցելմբերի 7-ն գտաւ սուրբ Հեղինէի կղզին, իսկ նոյն ամսի 24-ն արդէն Ափրիկէի հարաւային ծայրին էր հասել, և Վեկտեմբերի 8-ն այս ծայրը պատելով Սոփալեան ափերով ուղեւորեցաւ գէպ ի հիւսիսա-արևելք, այսինքն գէպ ի Մօղանբէդ, Մոնկլաս և Մելեդ: Այս երկիրներում սա գտաւ բաւականին լուսաւորեալ բնակիչներ (մահմետականներ) որք ծաղկած էին վաճառականութեամբ: Մողանբէկում և Մոնկլասում Ասսկօ-դե-Գաման կուեցաւ շատ վատանգների հետ: Բայց էնդուր համար էլ Ճելենկւացւոց թագաւորը ո՞չ թէ միայն բարեկամաբար ընդունեց նրան, այլ և տուեց մի առաջնորդ (լուսաւոր), որ Պորթուգալցւոց նաւակները անցկացրուց Ավիանոսից 700 մղոն, ուղղակի գէպի Ապէկաթայի նաւահանգիստը, որ Մալաբարեան ափերքի մօտ է, որ տեղ Գաման հասաւ Մայրի 19-ն 1498 թուին 10 ամիս ճանապարհորդելուց յետոյ:

Այսպէս ուրեմն երեկը Հնդկաստանի ծովային ճանապարհը գտնուեց, որի մասին ճանապարհողները այնքան խօսում էին: Ուրսալից հրացանները չնորհաւորեցին նրանց ցանկացած ափը, որ տեղ շուտով էլ վերեկան մեր Պորթուգալցիք: Ի՞նչ քանի զարմացան Եւրոպացիք, երբ որ Հրնդկաստանի մէջ դասն հարուստ վաճառականութիւն, գործարաններ և ուրիշ յիշատակարաններ, որք վկայում էին բնակիչների կրթութեան մասին: Մի Տունիսեասի Մավր, որ վաճառականութեան մասին կենում էր այս տեղ, և որ դիտէր Ասպանիներէն, շատ օգնութիւն արաւ նորեիներին՝ թէ խորհրդով և թի ամենահարկաւոր տեղեկութիւններով:

Տայյր մեր ծովագնացների հետեւելուց առաջ նոցա զըտած ճանապարհով, ասենք մի քանի խօսք այս հոչակաւոր երկրի վերայ:

Հնդկաստանը դանվումէ Ասիայի հարաւումը, որ պարունակում է երկու մեծ թերակղզներ: Սրեւելեան և Սրեւմունական Հնդկաստանը նայնպէս և իրանց պատկանած կղզներով և երկրներով առածքում են 125,000 քառակուսի մղն, որ աեղ կան 123,000,000 բնակիչներ: Սրեւելեան Հնդկաստանը հիւսիսացին կողմից պատաժ է աշխարհիս ամենաբարձր լեռներով Հիմալայեան և Զինացւոց կայսերութեան հիւսիսացին մասերով: Հնդկաստանի երկու թերակղզիքն էլ, նաև մանաւանդ Առաջնախաղաց Հնդկաստանը ծածկուած են հաւասար բարձրաւանգակութիւններով:

Զնայելով հոգի զանազանութեանը, այս երկիրը ընդհանրապէս նշանաւոր է իրա սրտղաւավութեամբ, մանաւանդ Գանդէս գեափ ընդարձակ քաշասավայրը, որ զանվումէ Հնդկաստանի հիւսիսոյ արեւելեան մասումը: Հիմալայեան լեռները աշխարհիս լեռներից ամենաբարձր են: Կրանց Դաւալագիքը գագաթը ծովի մուկերեւութիւց մինչև 26,500 անգղիական սանտիմատի է: Այս երկրի կլիման առհասարակ տաք, կամ լուս ևս տաել, շատ ջերմէ: Տայց այնու ամենայնիւ

աեղի բարձրաւանդակութենից կլիման բաւականին բարեխառնը վումէ : Չմեռը, որ միայն պատահումէ Հիմալայի հովաներում շարունակումէ միայն երեք ամիս, իսկ թերակղզու դաշտերում փոխանակ ձևեռոււան սաստիկ և երկարատեանձրեւ է լինում : Ամառնային տօթը, շատ անգամ սաստիկ է լինում, այս օտարականների համար մահացուցիչէ : Իրնութիւնը այս տեղ շատ հարուստ է :

Անդամնիների տեսակները Հնդկաստանի մէջ զանազան վումեն մի և նոյն տեսակներից, որք Ափրիկայումն են : Այն տեղ (Հնդկաստանում) գտնվում են փղեր, ուրնգեղջիւրներ, վազրեր, եղջիւրներ, ընձառիւծներ, զաղեներ, կաշմիրու այծեր, եղներ (ձիբոն) վայրենի գոմեշներ, կապիկներ, վաճիւռներ և շատ թիւնաւոր օձեր, հսկայ խեցապատեան կրրիաներ, ձիաներ, և բոլոր ընտանի կենդանիներ, հոյակապ թուզուններ, և վերջապէս մարգարտեայ խեցեմորթներ : Յուսկան մասը շատ հարուստ է, բայց հացեղէն բոյսերից, այս տեղ գտնուում են շատ համեմունքներ, զոր օրինակ՝ պղպեղ, կոճապղպեղ (Ամծօրիա), գարիչն, նմանապէս բամբակ և լեղակ : Մետաղներից գտնվում են ոսկի, անագ և պղինձ, թանկազին քարերից, աւելի ալմաս, յակինթներ և շափիղաներ : Մէկ խօսքով Հնդկաստանը աշխարհիս ամենահարուստ գանձն է, որի հետ շտո սակաւ երկիրներ կարող են համեմատիլ : Այս պատճառով էլ այն տեղի բնակիչները բազմաթիւ են և ճոխ, առարկայից վաճառականութիւնը շատ ընդարձակ է : Մի հայեացք դարձնենք նմանապէս այս նշանաւոր երկրի և նորա ժողովրդի վերայ :

Հին ժամանակներումը արդէն բազմաթիւ ճանապարհորդներ շատապում էին գնալ դէպի այս երկրը թանկազին բաներ ժողովելու, նորա հետ ունեին վաճառականութեան յարակցութիւններ Եղիստացիք, Փիւնիկեցիք և Քարելացիք : Խակ վերջը Հնդկաստանը աւար դարձաւ յաղթողներին Պարսիկների, Մակեդոնացիների և վերջապէս Հոռովմայեցիների :

Վաճառականութիւնը կատարվում էր թէ ծովային և  
թէ ցամաքային ձանապարհներով։ Միջն դարերում Արաբ-  
ները և ուրիշ շատ մահմետական ժարաբերութիւն ունենալ Հնդ-  
կաստանի հետ, սակայն չկարողացան այդ բոլորովին գաղա-  
րեցնել։ Կոստանդնուպօլիսը՝ աւելի երեելի եղաւ Հնդկաս-  
տանից բերած ապրանքների գարսելու համար (ըկլածիոն  
մեծո)։ Նրանք — վաճառականները, ուղևորվում էին Խնդոս  
գետով գետի հնդկական Ովկիանոսը, իսկ այն տեղեց պարս-  
կական Օսոցով գետի վերև, մինչեւ Խփրաս և Տիգրիս,  
յետոյ Բաղրատ քաղաքիցը (ուղտերով) անապատներով մին-  
չեւ Ալեպո, Տրիպոլիս և Կոստանդնուպօլիս, որ տեղեց  
շուտով Ժենովացիք և Վենետիկցիք տանում էին այս ապ-  
րանքները գետի արևմտեան վաճառականական նաւահան-  
գիսանները։ Եսրերումն Հնդկաստանի հետ վաճառականական  
յարաբերութեան համար գտնվում է մի ամենակարծ ձաւ-  
նապարհ, այսինքն Կարմիր ծովով և Սուվեզեան պարանոցով  
Հնդկաստանի հետ մի ամենալազ յարակցութիւն է սահ-  
մանուած։

Հնդկաստանի բնակչաց մեծ մասը հեթանոս է, որին  
կվերաբերին և տեղայի Հնդկացիք։ Մի քանի Արաբացիք և  
Պարսկաստանցի գաղթականներ դաւանում են մահմետական  
կրօնը և միայն մի քիչ մասն է խոստովանում քրիստոնէական  
հաւատը՝ ահա՛ մի քանի գարուց հետէ անդադար քարո-  
զում են։ Վասկո-գետ-Գամայի ժամանակ սորա բնակիչները  
կանչվում էին Մաւրեր, կամ Մորեր։ Հնդկաստանը շատ  
մանր աէրութիւններ է բաժանւած, ու համարեա՛ թէ բո-  
լորն էլ Մնդղայի իշխանութեան տակն են, որ հիմա իսկա-  
պէս կառավարիչ է այս ընդարձակ երկրիս։ Եւ հարկաւոր չէ  
ասել, թէ վաճառականական յարաբերութեամբ այս գաղթա-  
կանութիւնը ո՞րքան օգտակար է նորա (Անդղայի) համար։  
Եսրա զօրքը միշտ իր ուժը գործ է գնում բրիտանական իշ-

Խանութիւնը այս երկրում ապահով պահպանելու համար :  
Միւս կողմից Անդղեայի կառավարիչները իրանց բարեմիտ  
կարգադրութիւններով հողն են անուում այս երկրի ներքին  
բարեկարգութիւնը լաւացնելու համար :

Հնդկաստանի մէջ ուրիշ եւրոպական զաղթականու  
թիւնները շատ անշան են : Բայց հիմայ գառնանք էլի մեր  
ծովագնացների մօտ :

Եյսպէս ուրեմն Մայիսի 10-ն 1498 թւին Գամայի  
նաւատորմիզը զցեց իր խարիսխը Վալկաթայի դէմ : Եւրո-  
պացինները հիմանալով մուիկ էին անուում իրանց շրջապատող նոր  
առարկայից վերայ . աեղացիներն էլ զարմանում էին նորեկ-  
ների և նրանց նաւակնների վերայ , սրանք նրանց մի չտեսած  
հրաշք էին թւում : Հետաքրքիր Հնդկացիքն նաւերով շու-  
տով զնացին նրանց մօտ , ու Գաման քաղցրութեամբ ընդու-  
նելով՝ նրանցից ձկներ զնեց :

Եյս երկրի կառավարող թագաւորը , երբ որ լսեց նո-  
րեկների զալուստը , Գամայի մօտ դեսպաններ ու զարկեց և  
հրամիրեց նրանց իրան մօտ Վալկաթայ : Օգոստ Գամանը  
առաջ այս հրամերը շընդունեց , չետացաւ իրա նաւակնե-  
րից : Բայց յետոյ հարկադրուած , չնայեց այս արդեմունք-  
ներին , վեր առաւ իրան հետ տան և երկու աժդահաւ և  
կտրիչ զինւորներ , ու թընդանօպներով զինւորփած մակոյկի  
վերայ նստելով՝ զնաց դէպի ափը , որ տեղ ընդունեցին նրան  
թագաւորի գեսպանները և ժողովրդի բազմութիւնը , և որ  
նստեցրին նրան մի փառաւոր շարժուն աթոսի վերայ (հա-  
լանքին) ու տարան թագաւորական պալատը :

Գանի նա մօտենում էր թագաւորի պալատին , հետա-  
քրքիր ժողովրդոց բազմութիւնը աւելի շատանում էր , որ  
շատ ցանկանում էին տեսնել այս անսովոր տեսարանը :

Գամային անցկացրին դասերով՝ կանգնած զինւորների  
միջով : Պալատի առաջը նրան ընկալան թագաւորի բարձր  
աստիճանաւորները , որք տարան նրան թագաւորի կամ

Աամորենի գահլեցը : Այսմեանց ողջումնելուց յետոյ Գաման թարգմանչի օգնութեամբ հասկացրուց թագաւորին իւր հեռաւոր ձանապարհորդութեան գիտաւորութիւնը , ու հաւատացրուց Հնդկաստանի կառավարչին , թէ նա միայն ցանկանումէ ունենալ նորա հետ առեւարական յարաբերութիւն . նոյնպէս յայտնեց նրան Պորթուգալցոց թագաւորի ցանկութիւնը — հաստատել նորա հետ վաճառականական գաշնակցութիւն :

Սամորինը այս առաջարկութիւնը բարեկամաբար ընդունեց , ու Գամային ողջումնածաբար արձակեց : բայց միւս օրը արդին տատանվումէր իրան տուած խոստմունքի համար , որ քանի մի այն տեղացի մահմետական վաճառականները , որոց ձեռքին էր համարեա՛ թէ բոլոր վաճառականութիւնը . վախեցան այս գաշնակցութիւնից , կարծելով թէ իրանք սըրանից վնաս կատանան , ու էնպէս քանդեցին Գամայի Սամորենի հետ ունեցած յարաբերութիւնը , որ մեր ծովագնացը չէր իմանում թէ ի՞նչ անէ : Այս նախանձու մահմետական ները թագաւորին հաւատացրին թէ Աասկօ-դե-Գաման և նորա ձանապարհորդակիցները իրանց հայրենիքից արտաքսւած են , որք պարապում են միայն ծովային աւազակութեամբ : Եւ էսպէս Գաման չկարողացաւ խոնարհացնել անհաւատարիմ թագաւորին գէսպ ի իրան , որ չըր համաձայն վում ո՛չ մի վաճառականական յարաբերութիւն հաստատելու , հարկադրւեցաւ թողուլ այս երկիրը , ու նոյն թուին Օգոստոսի 10-ն յետ գառնալ գէսպի իրան հայրենիքը : Միայն յաջողւեց նրան խարէութեամբ ձեռք բերել մի բան — Սամորենի արմանենուց տերեւի վերայ գրած նամակը Պորթուգալցոց թագաւորի մօա , որի մէջ զրած էին էս բաները . „Քու մեծանուն հպատակ Աասկօ-դե-Գաման իմ երկրումն էր , որի գալուստը ինձ մեծ ուրախութիւն պատճառեց : Իմ երկրումն շատ մեխակ , փլիիլ , դարչներ ու թանկապին քարեր կան : Խակ գու ինձ առւր ոսկի ; արծաթ , բուստ (մարջան) և ծիրանի ապրանքներ“ :

Այսպէս Գաման թողեց Աալիաթան։ Աա յետ դարձաւ գէպի իրան հայրենիքը այն ճանապարհով, որով որ եւ կել էր։ Բայց այս ճանապարհորդութիւնը ավեաս չանցկացաւ, դուրս գալուց յետոյ, նաւերը նորողելու համար նրանք մի փոքրիկ կղզու վերայ վերեկան, հաղիւ թէ սկսած էր գործը և ահա նոցա վերայ յարձակուեցան շատ աւազակներ։

Եւրոպուհան նաւերից զինւորութիւնը նոցա յուսագրում էր չվախենալ և ո՛չ մի բանից։ Գաման նրանց հետ պատերազմեց շատ հրացաններ՝ միասին արձակելով, նոցա քշեց և այնուհետեւ էլ չերեցան։ Բայց Գաման էլ մի ուրիշ քամբադմութեան մէջ ընկաւ նորա նաւասարիների մէծ մասը տաք օդից իմիասին հիւանդացաւ և մի քանի օրում մեռան մինչև 30 մարդ։ Մեռնողների թիւը որովհետև ոչ բեցօք աւելանում էր և նրան պակասում էին նաւավարներ, գործ համար Գաման հարկադրւեցաւ իւր նաւակներից մինը այրել։ Աա արդէն հնդկական Ովկիանոսը վաղ էր անցկացել և Բարեկանուց զլուխն էլ վաղ էր պատել, բայց սարասփելի հիւանդութիւնը նրանց միջից չէր վերջացել, մինչև որ Գամայի եղայրն էլ զոհւեցաւ նրան։ Աասկօղե Գաման Սեպտեմբեր ամսին 1499 թուին համար Լեսրոն, իւր ճանապարհ հորդների մէծ մասը կորցնելով։ Աորա Հնդկաստան տարած 108 մարդից միայն 0 մարդ ողջ յետ դարձան իրանց հայրենիքը։ Գաման այս տեղ ընդհանուր ուրախութիւնով ընդունեցաւ։ Թագաւորը այս համարձակ ծովագնացին առաջտապէս վարձատրեց, նշանակելով նորա համար տարեկան թուշակ 3000 ոսկի և չնորհելով ախտղոս՝ իշխող իւր նաւածած երկրներին։ և Պարսկաստանի, Արաբիայի և Հնդկաստանի ծովային ճանապարհորդներին վերայ։ Գաման իրան հետ բերեց շատ հազւագիւտ բաներ, որոց հետ բերեց նմանապէս մի Հնդկացի կնիկ, որ մի կղզու վերայ ընկած էր։

Գամայի ձեռնարկած պործի յառաջադիմութիւնը Եւ ընդայումը շատ խոսվութիւն պատճառեց։ Լոմնոնուէլ թա-

գաւորը շտապեց ինչքան կարելի է շուտով շահւել Դամայի Հնդկասանի գաած ճանապարհից, և այդ բանից կէս տարի յեաոյ՝ Մարտ ամսին 1 00 թւեին նաւապետ Պեղու-Ել վերաի Արբալու իշխանութեան պատրաստելէր Հնդկաստան ուղարկելու. 13 դինորւած նաւերից կազմւած նաւատորմիզը: Դոքա աարան Հնդկաստան 1200 մարտ, բացի սրանից 8 օքանացիսկեան քարոզելներ, ու այդքան էլ ուրիշ հոդեռականներ, որ քրիստոնէական կրօնը քարոզեն Հնդկացւոց: Արբալ հրաման ստացւ, որ եթէ չկարողանայ խաղաղութեամբ դաշնակցութիւն հաստատել, այն ժամանակը նրանց նւաճելու համար հրացաններ գործ դնեն նւաճել Հնդկաստանը և հաստատել այն տեղ: Մարտի 8-ն 1500-ին նաւատորմիզը առաջասանները բարձրացնելով նաւեց դէպի ի արեմուաք: Արանք պատահմամբ եկան հարաւային Ամերիկայի այն երկիրը, որ հիմայ Ծարազելեայ է կոչվում: Մեր ծովագնացները տիրեցին այս երկրին; և համբաւ ուղարկեցին իրանց թագաւորին նոր զիւաի և նորա Պորթուգալիայի հետ միաւորելու մասին: Ծարազելեայից Մայիսի 5-ն նաւելով ուղեռիցին դէպի ի Ծարելյուայ գլուխը: Ճանապարհին բարձրացաւ սասափկակ մրրիկ և ջարդ ու փշոր արաւ նրանց նաւերի մեծ մասը: Բարբուզիմէու-Դիասը, որ այս կլուխը գտաւ, կորաւ այս ալիքների մէջ: Մրրիկը ողջ քասն օր շարաշար սպառնումէր: Աերջապէս Կաբրալը Յուլիսի 20-ն հասաւ Մովամբէկի նաւահանգիստը, և սկ Սեպտեմբերի 17-ն միայն վեց նաւով հասաւ Կալկաթայ: Կաբրալը Սամօրենի հետ եօսք գցեց, ու նրանից առաւ պատանդներ քանի որ ինքը գտնուումէր այն տեղ: Աերջապէս Կաբրալը Դեկտեմբերի 23-ին տեսնեցաւ այս երկրի կառավարչի հետ Կալկաթայի ափամբ, նա Սամօրենի մօտ դնաց շարժուն աթուով, որից հանդէսավ ընդունեցաւ: Պորթուգալցւոց թագաւորի արարէրէն գրած նամակը Սամօրենին տեց, յայտնելով նրան թէ ինքն ուղարկւած է նորա մօտ, որ Հնդկացւոց ապրանքները

արծաթի և ոսկու հետ փոխելով վաճառական դաշնակցութիւն հաստատէ. էստուք համար էլ Արբալը պահանջեց նրանից, որ ապրանք դարսելու տեղ տայ: Այս առաջարկութիւնը Սամորինը սիրով ընդունեց: Բայց չարասէր մահմատականների պատճառով, ո՛չ թէ միայն Հաստատեցին դաշնագրութիւնը, այլև աւելի զօրացաւ նրանց փոխադարձ անհաւատարմութիւնը, մինչև որ բնիկ երկրացիքը Պորթուգալցուոց վերայ յարձակեցան և նրանցից շատերին սպանեցին իրանց տւած տան մէջը:

Արբալը նրանց յանդգնութեան վրէժը չարաչար հանեց, այլրելով Հնդկացւոց բազմաթիւ նաւակները, պաշարեց Ալկաթան:

Յունար ամսին 1501 թւականին, նա յետ դառնալով այցելութիւն արաւ, ո՛չ թէ միայն Մալաբարաց ափներքին, այլև Աօխինայ և Վանորայ թագաւորներին, որք Սամորենի կարողութեան վերայ արդէն վազուց էին նախանձաւորութեամբ նայում, որին պէտք է տային հարկ:

Զարմանալի չէ որ նրանք Արբալին շատ քաղցրութեամբ ընդունեցին, ու լորին նորա նաւակները փլփիլով ու կոճապղպեղով: Արբալ այս ապրանքներավ դարձաւ դէպ ի իրան հայրենիքը, ու բարեյաջող նաւելուց և Բարեյուոյ զլուխը պարտելուց յետոց Յուլիսի 21-ն հասաւ Լիսբոն:

Այս երկու փորձառական ձեռնարկութիւնները յայտնի ցոյց տւին Պորթուգալցուոց թէ Հնդկաստանի հետ բարեպատեհ վաճառականնական յարաբերութիւնները կարող են հաստատել միայն հզօր զինուորած էկսպեալցիաներով: Ի հարկ է ամենքն էլ այսպէս չեին մտածում, այնպիսի մարդիքներ էլ զանեցան, որք կարծումէին թէ այս երկրի հետ վաճառականնական յարաբերութիւնները աւելի լաւ կլինի դադարեցնել, քան թէ շարունակել: Բայց այս խորհրդին հակառակեցաւ մենակ ազգային ամբարտաւանութիւնը: Պորթուգալցիք իրանց ձեռք բերած պատեի համար մեծամայում

էին, որք վճռեցին ամենեին ո՛չ մի արդելմննքից չհեռաւնալ, մինչև որ այս վաճառականական յարաբերութիւնները գոյացնեն, որի համար նոքա այսքան երազումէին: «Աս և նրանք պարզ տեսան որ իրանց Հնդկաստանից ժողոված գանձերը արդէն վաղէին ծածկել այն ծախսերը, որ արելէին Հնդկաստան նաւելու համար: Հոգեորականութիւնն էլ գովելով նրանց ձեռնարկութեան առաջադիմութիւններն խորհուրդ տւեց այս Ճանապարհորդութիւնը շարունակել, առաջադրելով մեծամեծ ժառայութիւններ նոր քրիստոնեաներին: Թագաւորը այն ժամանակը հրաման տւեց որ, ոչինչ ժախս չինայեն, մինչև որ կարողանան հարկադրել Հնդկաստանցւոց նորա անունը պատւելու: Մարտ ամսին 1502 թւականին, մի և նոյն ժամանակն ուղարկեցին դէս ի Հնդկաստան երեք նաւերի գումարատկ (օսկադրա). սրանից մինը բաղկանում էր 10 նաւակներից, Գամայի ձեռքով. միւսը վեցից Պինաէն Սանդրեի ձեռքով, և վերջապէս երրորդը հնդից Լատէնս-դե-Գամայի առաջնորդութեամբ: Ըսլոր նաւատորմիզի առաջնորդութիւնը ընդունեց Ասոկո-գե-Գաման, նրանց (Հնդկացիների) մէջը ահ ու պատիւ ազգելու դէս ի Պորթուգալցիքը, այսքան նաևակները բաւական էին: Գնալուց առաջ նաւապեար երգում կերաւ Լիսրոնի եպիսկոպոսանիստ վանքումը, որ թագաւորին հաստարիմ լինի: Արանից յետոյ Մարտի Յն Ճանապարհ ընկատ: «Աւապետ Գամայի նաւումը գանխում էին Աօսինու և Ասանորու թագաւորների գեապանները, որք եկել էին Ապրալի հետ: «Արանք յետ դարձան իրանց հայրենիքը շատ թանկագին ընծաններով՝ Պորթուգալու թագաւորից:

Երբ որ պատեցին Բարեյուսոյ զլուխը Գաման բաժանեց նաւատառորմիզը և հրամայեց չմիանալ մինչև Մողամբէկ: «Աւելով այս տեղ դաշնակցութիւն հաստատեց թագաւորի հետ, ու հիմնեց վաճառականութեան ժողովարան, որ տեղ Պորթուգալիք նաւատորմիզները դալու ժամանակը լորին իւ-

բանց նաւերը բոլոր հարկաւոր բաներով։ Դեռ Գամանն չէր  
եկել որ Սամորինը խմացաւ Պարթուգալցւոց թագաւորի դի-  
տօւրութիւնը, ու էս նրան ստատիկ անհանդիստ արաւ։  
Ես Գամայի դէմ ուղարկեց մի նաւակ պատերազմական դը-  
րոշակով։ Իսայց նաւապետը հեռացրուց բոլոր խաղաղական  
առաջարկութիւնները, լաւ իմանալով որ Հնդկացիքը ցան-  
կանում էին միայն ժամանակը երկարացնեն, պատերազմական  
պատրաստութիւն տեսնելու համար, ու պահանջեց մի կրո-  
րական խօսք։ Դեռ ևս պատասխան չտացած, նա հրամա-  
ցեց կախ անել իրանց նաւակների կայմնից այն 50 Մալա-  
բարացւոցը, որոց բոնել էին եղերքումը ու կորելով նրանց  
ոտներն ու ձեռքերը ուղարկեց Սամորենի մօտ, սպառնալով  
վարչիլ նորա հետ ել մի և նցյն կերպով, եթէ անհաւատար-  
մութիւն ցոյց կտայ, և աշա' միւս առաւոտը թնթահօդները  
գոռացին քաղաքի առաջին։ շատ տներ քարուքանդ եղան և  
թագաւորական ապարանները հողի հետ հաւանարեցան։  
Սրանից յետոյ Գաման մի քանի նաւակներով Ալկաթայից  
գնաց դէպի Ասիմին, որ աեղի թագաւորի բարեկամարար ըն-  
դունեց նրան։ Եսաւապետը նրանից շատ պարզեներ ստո-  
նալով՝ նորա հետ վաճառականական գաշնակցութիւն հաս-  
տատեց։ Արկին դէպի ի Ալկաթայ գառնալու ժամանակը Գա-  
ման պատահէց սարակինական նաւատորմիզին։ Գաման քա-  
ջութեամբ յարձակւեց նոցա գերայ, մի մասին ջարդեց, իսկ  
միւսին գերի բոնեց։ Եւր քաջութեան փոխարէնը քարձատր-  
ւեցաւ նա շատ ոսկեով՝ մարզարիսով ու թանկազին ակներով։

Հարունակեացի։

## ԱՅՍՄԱԿ ԹՎՔԵԼԵՎԵՑ

### ԻՆՉՉՐ ՌԵՋԵՆԵՎԱՊԵՏԵ

Հայր Ստեփանոս.

Զեր պատւական „Գարուն“ ամսագրի առաջին հատորի առաջարանի մեջ կարդալով նորա նպատակն, որով ցանկանումէ իւր առաջին բաժանման մեջ բովանդակել առարկայք հոգեօր պատմութեան, և տեսանելով մերայնոց շատերի պահանութիւնը հաւատոյ զիտելեաց մասին՝ անստորագրելե ու բախութիւն տիրեց հոգւոյս, որ մեր ժողովուրդը արժանացելէ նոր և ջերմեանդ հոգաբարձութեան լոյս ստանալ, և պաշտամանել իւր վերջին բարիքն, որոց համար չէ խնայել անգամ իւր կեանքը զոհելու:

Այն սիրտը և այն միտքը, որ կիմնայ իւր համազգիներս, կամ լաւ ևս ասել, իւր եղքօր բաժանին իրանից, չզիտեմ, ի՞նչպէս քարացած պէտքէ լինի չողքալ իւր հարազանի հրաժարումն՝ և ընդհակառակին, ի՞նչպէս չի ուրախանալ տեսնելով՝ որ այնպիսի հոգաբարձու հօր խնամատարութեան տակ կմտնի իւրեաններու հետ, որ այլ ևս ոչ մի խաբերայ պատճառ և ոչ մի տղիառութիւնից տեղեք ունեցող զիտւածք չէ կարող անջատել իւրանից իւր աւազանակից հաւատարիմը։ Կա չզիտեմ թէ ի՞նչ հոգւոյ տէր պէտք է լինի այն մարդը, որ վերոպրեալ հանգամանացն սառնարիւն նայէ, թոյլատրեցն ինձ՝ որ մինչև հիմայ կսպայի ոմանց ազգակցաց հաւատափոխութեան վերայ. արդէն իսկ թողուլ այս սեատես սուրդը, և զւարձանալ Զեր հոգեօր գաստիարակութեամբ այն յուսագրութիւններով՝ որք առաջին սպեղանի են բժշկութեան ազգի հոգեօր ցաւին. ազգին՝ որ մինչև ցայժմ կրօ-

նական թշնամեաց յարձակւելուցն ազատ մնացած օր չէ տես-  
սել, և ափսո՞ս, որ մէկ օր էլ հոգս չէ քաշել իւրեան այս  
յարձակմանց գէմ պաշտպանելու համար։ Հոգս չէ քաշել  
իւր տոհմականութիւնն կորսնցնելու վերայ, նորա համար որ  
չէ ունեցել միաք գիտնալու, թէ ինքն էլ սեռ ունի. հոգս չէ  
ունեցել իւրեան տւած վերնային պարզեն արժանապէս զի-  
տենալ, և զինքն մարդ ճանաչել ոչ միայն խօսքով՝ այլ և զոր-  
ծով, — նորա համար որ անուստ մնականութեան մէջ մնալով՝  
կորուսելէ մարդկութեան իրաւունքների պաշտպանելու կա-  
րողութիւնը, և վերջն էլ հոգս չի քաշել, և կարծես, թէ  
անհոգ կայ, թէ ի՞նչպէս որսորդներն կմտնեն իւր սուրբ փառ-  
քանը իւրեան կաթնասուն որդիքն՝ օտար եկեղեցւոյ ծառայ  
շնուրու համար, — այն պատճառաւ, որ չի զիտում, թէ ե-  
կեղեցւոյ ազատութիւնն է միայն, որ մինչեւ հիմայ իւր ազ-  
գութիւնն կենդանի է պահել. ո՛չ, եթէ նա այս վերջնին բա-  
րիքն էլ յօժարնայ բոլորովին կորսնցնել, ո՞ր կենդանութեան  
յոյս պէտք է ունենայ։

Տայց թէ ի՞նչքան կորուսելէ իւր խաւարամիտ անհո-  
գութիւնից, շատերն են ողբացել վասն որոյ ես կլամեմ և վասք  
կուտամ Աստուծոյ՝ որ Իւր ձեռագործ բանական այգին Խնքն  
է միշտ ջրում և պահում, և համազեաց բազգաւորե-  
ցուց արժանանալ այնպիսի շնորհաց, և այնպիսի մտաց լու-  
սաւորութիւն ստանալու, որ այսուհետեւ ոչ մէկ խռարաշը-  
ջեկ մարդու գործ էլ չպէտք է յաջողութիւն գտանէ նոցա ու-  
ռաջն, և կողոսպուտ տանի նոցա միամութիւնից, ինչպէս  
մինչեւ հիմա սովոր էր։ Հիմա Ձեր ամսազրի հոգենորոց աղ-  
բիւրների ջուլն հոսելով՝ անախտակիր պարտէպէս միջին մնա-  
ցած առևնկերը կոռողէ, այս, պէտք է նոր գարնանային կեանք  
նոցա պարզեե, որով անշուշտ կզարդարւին նոքա այն ազ-  
գաշահ արգասիքներով՝ որոց համար կցանկայ, և հոկացող  
է Ձեր եկեղեցեպաշտպան մաքին։ ՈՃո՞ղ ուրիմն ինձ Ամ-  
րապետի նման ձայնել գէպի ի ամեն իմ համազգիքս, թէ այս

ուրախութիւն, որ իմն է՝ լցեալ է,, . թո՛ղ ուրեմն զօրանայ, բարգաւաճի, և պաղաբերէ Զեր քահանայական հոգատարութեան արժանացած հայրենի բանաւոր բուրաստանն, լցուցանելով այն ձիւզերի պակասութիւնքը՝ որք անջուր մնալով շորացելեն, և կորւել Արբոյն Գրիգորի տնկած ծառից:

Կաւատամ, որ Զեր հոգեւոր և Ճշմարիտ հովութիւնն ե կարեկցութիւնն գէտի կրօնական զիտութիւնից զուրկ մընացած դասն մերայնոց, միտք տալով նոցա իւրեանց թերութիւնքն ուղղելու՝ պէտք է փրկէ նոցա անկիրթ միամտութիւնը խորսդ որսորդներու խորամանկութիւնից. նոքա լրասորւելով Զեր քարոզութեան լուսովն, պէտք է յանդիմանեն այնուհետեւ զերենք որսացողներին, թէ - ձեզ պատւիրած է Քրիստոս, հաւատն հեթանոսներուն քարոզել, և ոչ նոցա, որք քան զձեզ լսու հաւատով ու մտքով կճանաչեն Քրիստոսին, և զիսեն Կորա Ճշմարիտ հաւատն. վասն որոյ և Զեր բարերարութեան գործը բարձրացնելով Ալարչապետի առաջն, պէտք է փառաւորեն զԱս, և ինձ հետ մազթեն, որ Զեզ աւելի կարողութիւն ու զօրութիւն պարգևէ կատարելագործել Զեր ամեն ազգօգուտ նպատակներն, որք անտարակոյս համազգեացս ուրախութիւնն, իսկ եկեղեցւոյ մոլի ոսոխներուն յուսահատութիւնն, սուզ և յանդիմանութիւններ պէտք է պատրաստեն:

Մատուցանելով Զեր ուշիմ և բարեգործ խնամակալութեան վերայ ուրախացած իմ սրտաբուղիս խոսառվանութիւնն՝ կմնամ փափագող անխոչնդոտ առաջադիմութեան ազգալոյս ամսադրիդ:

Ե. Մանդակունի:

## ԱՐԵՏԱԿԱՆ

„Առունկ—Հայկական Աշխարհի“ № 12, կարգացինք  
մի յօդւած „Արթութիւն և Լուսաւորութիւն տարածող հիմ-  
նարկութիւնների մասին Թիվֆլիսում“ վերնագրով։ Այս յօդ-  
ւածի գրողի գլխաւոր միտքն է խօսիլ Հայոց ուսումնարան-  
ների վերայ, և շատ լաւ ու ազգօգուտ բան։ սակայն կար-  
դալով՝ արինք մի քանի նկատողութիւնք, զորա պարագ եմ  
համարում հրատարակել։

1) Գրւածքն է պատիւ և յարդ Թիվֆլիքու հոգեորսկան  
և աշխարհական դասին, որ երկու դասերն էլ աշխատումեն  
լուսաւորութիւնը տարածելու իրանց քաղաքի մէջ, վասն ու-  
րոյ կարող ենք ասել „փառք Թիվֆլիքեցւոց“։

2) Գրւածքի մէջ գտնում ենք կրքեր և անշրջանկատողու-  
թիւններ և սուտ կամ սխալ խօսքեր և պարբերութիւններ,  
զորս չենք դատապարտում, այլ ներում ենք իրեւ սխալական  
մարդոյ, որ երբեմն կիրքը կորանցնումէ ուղիղ հայեցւածքը,  
այլ միայն չտեսած բանը երևակայումէ իւր աչքի առջեւ, որ  
կնշանակէ տեսիլ կամ երազ։ և այսպիսի գրւածքը յատ աջա-  
նումէ տաստիկ երեւակայութենից, երբ որ առարկայի վերայ  
չունի ոչինչ տեղեկութիւն, այլ ուղղակի լրմբունումէ վերաշ-  
ցական գաղափարով, որով նիւթականը գաւանումէ նորա հա-  
մար աննիւթ։ ուրեմն անհիմն և անտեղի կամ պարզ ասել  
օդաբանութիւն։ Եւ

1) Այս յօդւածը զլխաւորապէս լիքն է կետերով (չեմ  
ասում թէ Պ). Ստեփան-էի-եանի բոլոր օրագիրները այսպէս  
են). և գրողի թուլութիւնը Հայոց լեզի մէջ երեսումէ՝ որ

նա չէ կարողացել այն միջահատած պարբերութիւնը շաղկապել և կետերով չ'լցնել երեսները, որի տամներորդ մասը կետեր են:

2) **Թիֆլիսու գնումէ Անդրկովկասեան կողմի** (Կավկազ-  
սկի) հայաբնակ քաղաքների կենդրոն, որ չէ երբէք, այլ է  
**Յայսկոյս Առվիասեան** (Յակավակայի) կողմի, որովհետե-  
թիֆլիսումն է զինաւոր Գիմնազիայն, Ուուաց և Հայոց  
հոգեւոր ուսումնարաններն . իսկ Անդրկովկասեան կողմի զինա-  
ւոր ուսումնարանն է Ստաւրապօլու Գիմնազիայն, և այն կող-  
մից չկայ ուսանող Թիֆլիսում:

3) **Գրումէ եր. 402 տող 18**, „բայց ցաւ է ասել, այս-  
տեղ մեր ժողովուրդի բարոյական կրթութիւնը շատ կազ է  
գնում: Ժողովուրդը ընկղմած է մնութիապաշտութեան մէջ“:

Իսրայելական կրթութեան օդուտը արգէն հասկացել է  
ժողովուրդը, և **Թիֆլիսու** հրապարատիական և մասնաւոր ու-  
սումնարաններում կրթուում են մանուկները, և աւելի կվար-  
գանան բարոյականութեան մէջ՝ եթէ որ օրագրի հրատարա-  
կողները՝ որք համարւելով որպէս լուսաւորեալ և բարի դաս-  
տիարակութիւն հրատարակող անձինք, իրանց օրագրերի մէջ  
զործ չածեն անբարոյական խօսքեր, ինչպէս տեսնում ենք միշտ  
Հայոց-կական Աշխարհից օրագրի կրթութիւնից և աղքին  
վերաբերեալ յօթւածների մէջ, որպիսի անվայելու քառերը  
մեծ տպաւորութիւն ունին մանուկների հոգեկան կարողու-  
թեան մէջ:— Իսկ որ տառմէ թէ „ժողովուրդը ընկղմած է  
մնութիապաշտութեան մէջ“, մեր ժողովուրդն է ջերմեռանդ  
առ եկեղեցին, առ կրօնը և առ եկեղեցական տւանդութիւնքը,  
բայց ի՞նչ մնութիապաշտութիւն կայ՝ մեզ յայտնի չէ, այլ  
ցանկանում ենք լսել գրողից:

4) **Եկեղեցական ծխական ուսումնարանների համար գրր-  
ւածքը** է տեղ տեղ սխալ. առ գրում է թէ „բարձի  
թողի են տրված (փոխանակ ասելու արած) հոգաբարձուների

վերահայեցողութենից“ , որ է շատ սխալ . պի նոցա վերահատարութիւնը Բարձր սրբազնն առաջնորդի կողմից միշտ լինումէ , և կարգւած է նոցա վերատեսուչ արժանապատիւ Գրիգոր քահանայն Տէր Բարսեղեանց , որ անդադար նայումէ ուսման ընթացքին . բ . թէ , որանափութիւնը շատ թոյլէ , և ոչինչ չին ուսմանում“ , — հարցնենք , թէ սորա զբողը՝ երբ քննեց աշակերտներուն , նոցա յառաջադիմութիւնը յայտնի է Աւրասիսեան գալոցին , ուր մննումն առաջին և երկրորդ գասատանց մէջ . բայց խորհուրդ կտանք ամենքին , որ առաջլաւ իմանան բանի որպիսութիւնը և ապա զբեն . ապա թէ ոչ այսպիսի երեակայեալ գրւածքները մտցնումն ժողովրդեան մէջ սառնութիւն , որով ազգային կրթութեան գործը մնումէ յետագաս : Ապա զբումէ ուսումնարանների թիւը անուն անուն , բայց տեղ տեղ սխալ , „1) Սուրբ Գէորգի եկեղեցու ուսումնարանը“ : Ծնիֆլիզում Սուրբ Գէորգ անունով եկեղեցին չունի ուսումնարան , այլ այս է դարմանքը՝ որ երես 432 տող 16 Ծնիֆլիզու ստորագրութեան մէջ զբումէ „Աւթողիկէ սուրբ Աստուածածինը“ և 464 եր . գառնումէ սուրբ Գէորգ . „3) Ասրաշէնի ուսումնարանը“ : Ուսումնարանների ծախսը նաև են եկեղեցիքը . բայց Ասրաշէն եկեղեցին չունի ուսումնարան , այլ նորա սրահունի եղածը է մասնաւոր՝ պատկանեալ Յօվանէփ սարկաւագ - Մամուլեանցին , և աշակերտները փողով են ուսանում :

5) Ասացնաք թէ բան զրելու համար պէտք է ստոյգ աղբիւրներ ունենալ , և ոչ թէ երեակայեալ զրել , ինչպէս երես 465 գրւած է թէ „Աեղղեշէմի եկեղեցւոյ մօտ պ . դօկտօր Տէր զրիգորեանի և արժանապատիւ Գրիգոր քահանա Տէր Բարսեղեանի աշխատութեամբ հիմնըւեցաւ Հայ աղջկանց համար ուսումնարան“ : Այս է ըստ ամենայնի սխալ զոր ուղղելու համար զնումնենք այս տեղ Մատթէոս Աւթուղիկոսի կոնդակը , որից կարգացողը կիմանայ այն ուսումնարանի հիմնողը :

ՄԱՏԹԵՈՍ ծառայ Քրիստոսի և ամհասա-  
նելի կամօքն Ասոուծոյ Եպիսկոպոսապետ և Կա-  
թողիկոս ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք  
Համազգական նախամեծար Աթոռոյ Արարա-  
տիան Առաքելական Մայր Եկեղեցւոյ ԿԱ-  
ԹՈՒՂԻԿԵ ԷԶՄԻՍ. Ըմբ-  
նասիրելի որդոյ Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ շւ-  
նորհունակ Ատեփանոս քահանայի Մանողինեանց հայրապե-  
տական սուրբ ողջունիւ ծանուցանեմք, զի որպէս 'ի լինելն  
իմ 'ի սուրբ Խջմիածին և առաւել ևս 'ի գալստեան իմում  
այսր 'ի Տփխիս լուեալ եմ և լսեմ 'ի հաւասարիմ աղբերաց  
զարիական գործս ձեր յասպարիլի տպագրութեան „Մեղու  
Հայաստան“ լրագրի և յայլ գրաւոր վաստակս ձեր, և տե-  
ղեկացեալ մեր հողեոր ձերոց բարեմանութեանց բազմամեայ  
և հաւասարիմ ծառայութեանցդ 'ի փայելչութիւն սրբոյ եկե-  
ղեցւոյ և ունուցական ամենակարեւոր պաշտամանցդ, և զի Յով-  
հանէս Վւազ քահանայն Տէր Գաւթեանց Բեղդէհէմ և  
կեղեցւոյ մերով հրամանաւ արձակեցաւ յւագ քահանայա-  
կան պաշտօնէն այնր եկեղեցւոյ վասն անհաւատարիմ և ան-  
հնագանդ բարուցն իւրոց և արգելաւ 'ի քահանայագործու-  
թենէ մինչեւ ցկատարեալ զզջումն նորա և յապաշխարութիւն  
ըստ չափու յանցանացն . և կամք մեր են 'ի զաւթի նոյն եկե-  
ղեցւոյ բանալ զծխուկան գվարոցս օրիորդաց 'ի պարծանս և  
'ի լուսաւորութիւն լրութեան Ազգիս պարտ մեզ վարկանիմք  
ըստ մերում հայրապետական ծայրագոյն իշխանութեան խը-  
րախուսել զձեզ ևս քան զես յաւելաւ վարիութիւն ձեր 'ի  
փայելչութիւն սրբոյ եկեղեցւոյ և 'ի միսիթ արութիւն եկեղե-  
ցական իշխանութեան և ժողովրդոց արեամք Տեառն մերոյ  
Յիսուսի Քրիստոսի փրկելոց, և առ այս նպատակ աշա այ-  
սու մերով կոնդակաւ բարձրացուցանեմք զարժանանձնութիւն  
ձեր յասահճան Վւազ քահանայութեան և կարգեմք զձեզ  
մշանջենաւոր Վւազ քահանայ Բեղդէհէմ եկեղեցւոյ ձե-  
րում հոգուութեան յանձնեալ ժողովրդովք և յորգոր լինիմք  
ձեզ՝ լինել քաջ և արթուն 'ի գործս աւագ քահանայութեան  
և հսկել վասն փայելչութեանց սրբոյ եկեղեցւոյ . յամենայն  
եօթնեկի գործել վերահասութիւն մաից և ելից եկեղեցւոյն,

Հաւատաբարմութեան կամ անհաւատաբարմութեան միաբան քահանայից, գպլաց և ստորին եկեղեցական պաշտօնէից, և որ օգտակարազոյն է քան զամենեսին յորդորել զբարեպաշտ ժողովուրբան եկեղեցւոյն համակամ հաճութեամբ բանալ զզպրոյն օրիորդաց որսց վասն բազմիցս առաջարկեալ եմք մեք անձանց բարեպաշտից բանիւ և կոնդակաւ մերով, և ունիցիք զաշալուրջ հսկողութիւն յառաջազիմութեան դպրոցին ինքնին մատակարարելով զբանն կենաց ըստ ներելոյ ժամանակի պաշտօնաբարութեանցդ ուշիմամիա օրիորդաց ազգիս Հայոց զարգացուցանելով զնոսա առաւել ևս 'ի մաքրութեան և 'ի սրբութեան փարուց և բարուց, որպէս զի երկիւղիւն Աստուծոյ սնեալ բարեկիրթ մայր լիցին նոքա որդւոց իւրեանց, և մեք զազօթս առնեմք առ Աստուծոյ զի տացէ ձեզ զօրութիւն և կարողութիւն առ 'ի բարւոք կատարել դայս ներկայ պաշտօն ձեր, յոյս մեծ ունելով առ բարեզթութիւնն Աստուծոյ որ հանապազ առատապէս բաշխէ երկիւղածաց իւրոց, և մնամք միշտ առ ձեզ բարեհած։

Խսկականն ստորագրեալ է. **ՄԵՍԹԵՅԱՍ Կաթողիկոս ամենայն Հայոց :**

№ 157.

'ի յ3-ն Մայիսի 1 63 տ ամի:

'ի յԲ. Տփիսի :

Մի այսպիսի կոնդակ ստացաւ և Պ. երիցփոխան գոկտոր Միքայէլ Տէր Գրիգորեանց, և մենք երկուքս պատրաստեցինք ուսումնարանը և աշակերտուհիքը. և Ծարձր սրբազն Ծռաջնորդն Աքաստանի բացեց հանդիսով 1863 թւին Կոյեմբերի 10-ն։

---

Հրատարակիչ Ատեփանոս աւագ քահանայ Մանդինեանց :

---

Дозволено цензурою. Тифлисъ 19-го Апрѣля 1866. г.

'ի Տպարանի Գլուխոր Կառավարութեան  
Փոխարքային Կովկասու :

12  
13  
14  
15  
16  
17  
18  
19  
20  
21  
22  
23  
24  
25  
26  
27  
28  
29  
30  
31

12  
13  
14  
15  
16  
17  
18  
19  
20  
21  
22  
23  
24  
25  
26  
27  
28  
29  
30  
31

1) «Գաղտուն», ամսագիրն դուրս դաշտով ամփառ մի անգամ կալարունակէ իւր մէջ հոգեորական առարկայք՝ պատմութիւն քրիստոնէութեան և Եկեղեցւոյ, Ճառեր և քարոզներ:

2) Ռօմաններ, զըսյցներ, համառօտ նկարագրութիւնք, տեղագրութիւնք, դրամէք և ոտանաւորներ:

3) Տեսութիւն մատենագրութեան: Արան կվերաբերի կլորիտիքական քննութիւն հայերէն տպած դրքերի, և պէտա դօդիկական յօդւածներ:

4) Տնական տարեգրութիւններքին կեցութիւն և այսոց, և Գէլէտոն:

Յանկացողք ստանալ այս ամսագիրը կարող են դիմել Հրատարակողնն — Въ Редакцію Армянского журнала „ВЕЧНА“ въ Тифлисъ, въ домъ Протоіерея Ман-денянцъ.

Ամսագիրը կրազկանայ չորս կամենդարնի թերթից, այն է 64 երեսից, և 12 տետրակների գինն է 6 մանէթ՝ թէ թշրիփներում և թէ ուրիշ քաղաքներ ուղարկելով:

